Ա 92
3409

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

**ՆՅՈՒԹԵՐ 1933 Թ. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ**

ՀԿ(Բ)Կ ԿԿ-Ի ԱԳԻՏՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱԺԻՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

1 Ի. Ստալին—Գյուղի աշխատանքի մասին—*ճառ Համկ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումում 1933 թ. հունվարի 11-ին։*

2 ՄՏ կայանների յեվ խորհտնտեսությունների քաղաքական բաժինների նպատակներն ու խնդիրները—*Համ Կ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումի բանաձևը ընկ. Կագանովիչի զեկուցման առթիվ, ընդունված 1938 թ. հունվարի 11-ին։*

3 Կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման հերթական միջոցառումների մասին—*Համկ(բ)Կ ԿԿ-ի 1932 թ. փետրվարի 4-ի վորոշումը։*

4 Լենինիստորեն դաստիարակենք կոլտնտեսական ակտիվին—*«Պրավդա»-յի 1932 թ. օգոստոսի 6-ի առաջնորդողը։*

5 Հասունացնել յեվ դաստիարակել կոլտնտեսական ակտիվը—*«Զարյա Վոստոկա»-յի 1933 թ. հունվարի 4-ի առաջնորդողը։*

6 Վ. Տոդբես—Կազմակերպել կոլտնտեսական ակտիվ—*հոդված «Կուսշինարարություն» ժուրնալի 1932 թ. № 22-ից։*

7 Ամուր կադրեր կոլտնտեսական կարգերին—*«Соцземледелие» թերթի 1933 թ. հունվարի 5-ի առաջնորդողը։*

8 Կոլտնտեսությունների ղեկավար կադրերի ամրացման մասին—*Համ. Կ(բ)Կ ԿԿ-ի 1932 թ. մայիսի 10-ի վորոշումը։*

9 Կոլտնտեսություններում յեվ խորհտնտեսություններում կուսակցական ու կոմյերիտական ուժերի դասավորում կատարելու մասին—*Համ Կ(բ)Կ ԿԿ-ի 1932 թ. մայիսի 15-ի վորոշումը։*

ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆ 1933

Տեխն. խմբագիր Մ. Եփրիկ
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 2 մարտի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 31 մարտի 1933 թ.
Տիրաժ 10.000 Հրատ. № 89 163.000 տպ. նշ.

Պետհրատի տպարան, Պատվեր № 574, Գլավլիտ 7722 (ր)

3409-[illegible]

1

**Ի. ՍՏԱԼԻՆ**

# ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ*)

Ընկերներ,

Ես կարծում եմ, վոր ճառախոսները ճիշտ պատկերեցին գյուղի կուսաշխատանքի վիճակը, նրա թերությունները, նրա արժանիքները, մանավանդ նրա թերությունները: Եվ այնուամենայնիվ, յես կարծում եմ, վոր նրանք չասացին ամենագլխավորը մեր գյուղի աշխատանքի թերությունների նկատմամբ, հրապարակ չհանեցին այդ թերությունների արմատները: Մինչդեռ այդ կողմն ամենից ավելի հետաքրքիր է մեզ համար: Ուստի, թույլ տվեք իմ կարծիքը հայտնել գյուղի մեր աշխատանքի թերությունների մասին, հայտնել այն ամբողջ ուղղամտությամբ, վորը հատուկ է բոլշևիկներին:

Վո՞րն է վերջին տարում՝ 1932 թվականին գյուղում մեր կատարած աշխատանքի գլխավոր թերությունը:

Գլխավոր թերությունն այն է, վոր այս տարի հացամթերումները մեզ մոտ կատարվեցին ավելի մեծ դժվարություններով, քան նախորդ տարում, քան 1931 թվին:

Այդ վոչ մի կերպ չի կարելի բացատրել բերքի վատ վիճակով, վորովհետև այս տարի մեզ մոտ բերքն անցյալ տարվանից վատ չէր, այլ ավելի լավ էր: Վոչ վոք չի կարող ժխտել, վոր 1932 թվականին հացահատիկների ընդհանուր բերքն ավելի յեր, քան 1931 թվականին, յերբ ԽՍՀՄ-ի հյուսիս-արևելյան հինգ հիմնական շրջաններում յերաշտն զգալի չափով կրճատել եր յերկրի հացահատիկային բալանսը: Իհարկե, մենք 1932 թվականին ևս բերքի վորոշ կորուստ ունեցանք Կուբանում ու Տերեկում, ինչպես և Ուկրաինայի մի քանի շրջաններում՝ կլիմայական աննպաստ պայմանների պատճառով: Սակայն, չի կարող տարակույս լինել, վոր այդ կորուստները չեն կարող կեսն էլ կազմել այն կորուստների, վոր ունեցանք մենք 1931 թվականին ԽՍՀՄ-ի հյուսիս-արևելյան շրջաններում առաջացած յերաշտի պատճառով: Հետևաբար 1932

*) Ճառ Համկ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումում 1933 թվի հունվարի 11-ին:

թվականին մենք ավելի շատ հացահատիկ ունեյինք, քան 1931 թվականին: Այնուհանդերձ, չնայած այդ հանգամանքին, 1932 թվականին հացամթերումները կատարվեցին մեզ մոտ ավելի մեծ դժվարություններով, քան նախորդ տարում:

Ինչո՞ւմն է բանը: Որո՞նք են մեր աշխատանքի այդ թերության պատճառները: Ինչո՞վ բացատրել այդ անհամապատասխանությունը:

1) Դա նախ և առաջ բացատրվում է նրանով, որ տեղերում աշխատող մեր ընկերները, մեր գյուղական աշխատողները, չկարողացան հաշվի առնել գյուղի այն նոր պայմանները, որոնք ստեղծվել էյին հացի կոլտնտեսական առևտուր հայտարարելու շնորհիվ, և որովհետև նրանք հաշվի չառան այդ նոր պայմանները, հենց այդ պատճառով էլ չկարողացան վերակառուցել իրենց աշխատանքը նոր ձևով՝ համաձայն նոր պայմանների: Քանի դեռ հացի կոլտնտեսական առևտուր չկար, քանի դեռ չկար հացահատիկի յերկու գին՝ պետական ու շուկայական, գյուղում գոյություն ուներ մի դրություն: Հացահատիկի կոլտնտեսական առևտուր հայտարարվելուց հետո դրությունը պետք է փոխվեր կտրուկ կերպով, որովհետև կոլտնտեսական առևտրի հայտարարումը նշանակում է օրինականացնել հացահատիկի շուկայական գինը, որն ավելի բարձր է, քան պետության սահմանած գինը: Ավելորդ է ապացուցել, որ այդ հանգամանքը պետք է որոշ դժկամություն ստեղծեր գյուղացիների մոտ՝ պետությանը հաց հանձնելու գործում: Գյուղացին այսպես էր հաշվում՝ «Հայտարարված է հացահատիկի կոլտնտեսական առևտուր, օրինականացված է շուկայի գինը, շուկայում յես կարող եմ նույն քանակությամբ հացի համար ստանալ ավելի շատ, քան հացահատիկը պետությանը հանձնելիս, հետևաբար, յեթե յես հիմար չեմ, յես պետք է հացահատիկը միաժամանակ պահեմ, քիչ հանձնեմ պետությանը, ավելի շատ թողնեմ կոլտնտեսական առևտրի համար և այդպիսով ավելի շատ ստանամ վաճառված հացահատիկի նույն քանակի համար»:

Ամենապարզ և բնական տրամաբանություն:

Սակայն այստեղ ցավն այն է, որ մեր գյուղական աշխատողները, համենայն դեպս նրանցից շատերը չհասկացան այդ պարզ և բնական բանը: Կոմունիստները խորհրդային իշխանության առաջադրանքները չվիժեցնելու համար այդ նոր պայմաններում պետք է բերքահավաքի հենց առաջին օրերից՝ դեռ 1932 թ. հու-



լիս ամսին, ամեն կերպ ուժեղացնեյին և խթանեյին հացամթերումները: Այդ էր պահանջում դրությունը: Սակայն ինչպես վարվեցին նրանք իրականում: Փոխանակ հացամթերումները խթանելու, նրանք սկսեցին խթանել ամեն տեսակ ֆոնդերի կազմումը, դրանով իսկ ուժեղացնելով հաց հանձնողների դժկամությունը՝ պետության հանդեպ իրենց պարտականությունները կատարելու գործում: Չհասկանալով նոր դրությունը, նրանք սկսեցին վախենալ ոչ թե նրանից, որ գյուղացիների դժկամությունը կարող է դանդաղեցնել հացամթերումները, այլ նրանից, որ գյուղացիները գլխի չեն ընկնի միաժամանակ իրենց մոտ պահել հացը՝ հետագայում կոլտնտեսական առևտրի գծով շուկա հանելու համար և հանկարծ իրենց ամբողջ հացահատիկը կհանձնեն էլեվատորին:

Այլ խոսքով, մեր գյուղական կոմունիստները՝ գեթ նրանց մեծ մասը կոլտնտեսական առևտուրը մոտեցին նրա միայն դրական կողմից, ըմբռնեցին և յուրացրին նրա դրական կողմը, սակայն բնավ չհասկացան և չյուրացրին կոլտնտեսական առևտրի բացասական կողմերը, չհասկացան, որ կոլտնտեսական առևտրի բացասական կողմերը կարող են մեծ վնաս պատճառել պետությանը, յեթե նրանք, այսինքն՝ կոմունիստները հացահատիկի բերքահավաքի առաջին իսկ օրերից ամբողջ թափով չսկսեն խթանել հացամթերման կամպանիան:

Յեվ այդ սխալը կատարեցին ոչ միայն կոլտնտեսությունների աշխատողները: Այդ սխալը թույլ տվին նաև խորհտնտեսությունների դիրեկտորները, որոնք հանցավոր կերպով իրենց մոտ պահելով պետությանը հանձնելիք հացը, սկսեցին դրսում վաճառել վերջինս ավելի բարձր գնով:

Կոլտնտեսական առևտրի ծավալման վերաբերյալ իրենց հայտնի որոշման մեջ հաշվի առե՞լ էյին արդյոք Ժողկոմխորհն ու Կենտկոմը հացահատիկի կոլտնտեսական առևտրի կապակցությամբ ստեղծված այդ նոր պայմանները: Այո, հաշվի առել էյին: Այդ որոշման մեջ ուղղակի ասված է, որ հացահատիկի կոլտնտեսական առևտուրը կարելի յե սկսել միմիայն այն ժամանակ, յերբ ամբողջովին և լրիվին կատարված կլինի հացամթերումների պլանը և կհավաքվի սերմացուն: Այնտեղ ուղղակի ասված է, որ միմիայն հացամթերումները, սերմացվի հավաքումը ավարտվելուց հետո՝ մոտավորապես 1933 թ. հունվարի 15-ին,

միմիայն այդ պայմանները կատարելուց հետո կարելի կլինի սկսել հացահատիկի կոլտնտեսական առևտուրը: Ժողկոմխորհը և Կենտկոմն իրենց այդ վորոշումով կարծես ասելիս լինեյին մեր գյուղական աշխատողներին՝ մի՛ վարագուրեք ձեր ուշադրությունը ֆոնդերի ու ամեն տեսակ պաշարների հոգատարությամբ, մի՛ շեղվեք գլխավոր խնդրից, ծավալեցեք հացամթերումները բերքահավաքի հենց առաջին որերից և զարկ տվեք նրանց, վորովհետև առաջին պատվիրանն է՝ կատարել հացամթերումների պլանը, յերկրորդ պատվիրանն է՝ հավաքել սերմացուն և միմիայն այդ պայմանները կատարելուց հետո կարող եք սկսել և ծավալել հացահատիկի կոլտնտեսական առևտուրը:

Կենտկոմի Քաղբյուրոյի և Ժողկոմխորհի սխալը թերևս այն եր, վոր նրանք բավականաչափ համառությամբ չշեշտեցին գործի այդ կողմը և բավականաչափ բարձր չնախազգուշացրին մեր գյուղական աշխատողներին կոլտնտեսական առևտրում թաքնված վտանգի մասին: Բայց վոր նրանք այդ վտանգի մասին նախազգուշացրել եյին և նախազգուշացրել եյին անհրաժեշտ պարզությամբ,—դրանում վոչ մի կասկած լինել չի կարող: Պետք է խոստովանել, վոր Կենտկոմը և Ժողկոմխորհը մի քիչ գերագնահատեցին տեղերում՝ վոչ միայն շրջաններում, այլև մարզերում աշխատող մեր ընկերների լենինյան կոփվածությունը և հեռատեսությունը:

Գուցե կարիք չկա՞ր հայտարարել հացահատիկի կոլտնտեսական առևտուրը: Գուցե դա սխա՞լ եր, մանավանդ յեթե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր կոլտնտեսական առևտրին հատուկ են վոչ միայն դրական, այլև վորոշ բացասական կողմեր: Վո՛չ, դա սխալ չեր: Հեղափոխական և վոչ մի ձեռնարկում ապահովված չե վորոշ բացասական կողմերից, յեթե նա սխալ ե իրագործվում: Նույնը պետք ե ասել նաև հացահատիկի կոլտնտեսական առևտրի մասին: Կոլտնտեսական առևտուրը հարկավոր ե և ձեռնտու յե ինչպես գյուղին, այնպես ել քաղաքին, թե՛ բանվոր դասակարգին և թե՛ գյուղացիությանը: Յեվ հենց վորովհետև նա ձեռնտու յե, անհրաժեշտ եր մտցնել այդ առևտուրը:

Ինչո՞վ եյին ղեկավարվում Ժողկոմխորհը և Կենտկոմը մտցնելով հացի կոլտնտեսական առևտուրը:

Նախ և առաջ նրանով, վոր ընդարձակեն քաղաքի և գյուղի



ապրանքաշրջանառության բազան և բարելավեն բանվորներին գյուղատնտեսական մթերքներ, իսկ գյուղացիներին՝ քաղաքի արտադրանք մատակարարելու գործը: Տարակույս չի կարող լինել, վոր միմիայն պետական և կոոպերատիվ առևտուրը բավական չե դրա համար: Ապրանքաշրջանառության այդ կանալները պետք եր լրացնել կոլտնտեսական առևտրի նոր կանալով: Յեվ մենք լրացրինք՝ մտցնելով կոլտնտեսական առևտուրը:

Ապա նրանք ղեկավարվեցին նրանով, վոր հացահատիկի կոլտնտառևտրի միջոցով յեկամտի լրացուցիչ աղբյուր տան կոլտնտեսականներին և ամրացնեն նրա տնտեսական դրությունը:

Վերջապես նրանք ղեկավարվեցին նրանով, վոր կոլտնտեսական առևտուր մտցնելով, գյուղացուն նոր մղում տան՝ բարելավելու կոլտնտեսությունների աշխատանքը թե՛ ցանքի գծով և թե՛ բերքահավաքի գծով:

Դուք գիտեք, վոր Ժողկոմխորհի ու Կենտկոմի այդ բոլոր նկատառումներն ամբողջովին ու լրիվին հաստատվեցին կոլտնտեսությունների վերջին ժամանակվա կյանքին վերաբերող փաստերով: Կոլտնտեսությունների ամրացման պրոցեսի ուժեղացումը, կոլտնտեսություններից դուրս գալու դեպքերի դադարումը, մենատնտեսների հարաճուն ձգտումը դեպի կոլտնտեսությունները, կոլտնտեսականների ձգտումը՝ ավելի խիստ ընտրություն կատարել նոր ընդունվող անդամների մեջ,—այս բոլորը և դրա նման շատ բաներ անվիճելիորեն վկայում են, վոր կոլտնտեսական առևտուրը վոչ միայն չթուլացրեց, այլ ընդհակառակը ուժեղացրեց և ամրացրեց կոլտնտեսությունների դրությունը:

Հետևաբար մեր գյուղի աշխատանքի թերությունները բացատրվում են վոչ թե կոլտնտեսական առևտրով, այլ նրա վո՛չ միշտ ճիշտ կիրառումով, նոր պայմանները հաշվի առնելու անկարողությամբ, իրենց շարքերը հացահատիկի կոլտնտեսական առևտրի հայտարարման կապակցությամբ ստեղծված նոր պայմանների համաձայն վերակառուցելու անկարողությամբ:

2) Մեր գյուղի աշխատանքի յերկրորդ թերությունն այն ե, վոր տեղերում մեր ընկերները, և վոչ միայն այդ ընկերները, չեն հասկացել գյուղի մեր աշխատանքի պայմանների այն փոփոխումը, վորը տեղի ունեցավ հացահատիկային հիմնական շրջաններում կոլտնտեսությունների տիրապետող դիրքի հաստատման կապակցությամբ: Մենք բոլորս ել ուրախանում ենք, վոր տնտե-

ության կոլտնտեսական ձևը դարձել է տիրապետող ձև մեր հացահատիկային շրջաններում: Սակայն դեռ բոլորը չեն հասկանում այն, վոր այդ հանգամանքը չի նվազեցնում, այլ ավելացնում է մեր հոգացողությունը և մեր պատասխանատվությունը գյուղատնտեսության զարգացման գործում: Շատերը կարծում են, թե քանի վոր ձեռք է բերված, ասենք՝ 70 կամ 80 տոկոսով կոլեկտիվացում այս կամ այն շրջանում, այս կամ այն մարզում, ապա դրանով արդեն ամեն ինչ արված է, և մենք կարող ենք թողնել գործն իրերի բնական ընթացքին, թողնել գործն ինքնահոսի, յենթադրելով, վոր կոլեկտիվացումն ինքը կանի իր գործը, ինքը կբարձրացնի գյուղատնտեսությունը: Սակայն դա խոր մոլորություն է, ընկերնե՛ր: Իրոք կոլեկտիվ տնտեսության՝ վորպես տնտեսության գերակշռող ձևին անցնելը չի նվազեցնում, այլ ավելացնում է մեր հոգացողությունը գյուղատնտեսության շուրջը, չի նվազեցնում, այլ մեծացնում է կոմունիստների ղեկավար դերը գյուղատնտեսության բարձրացման ասպարեզում: Ինքնահոսն այժմ ավելի քան յերբևիցե վտանգավոր է գյուղատնտեսության զարգացման գործի համար: Ինքնահոսն այժմ կարող է տապալել ամբողջ գործը:

Քանի դեռ գյուղում տիրապետում էր մենատնտեսը, կուսակցությունը կարող էր իր միջամտությունը գյուղատնտեսության զարգացման գործին սահմանափակել ոգնության, խորհրդի կամ նախազգուշացման առանձին ակտերով: Այն ժամանակ մենատնտեսն ինքը պետք է հոգար իր տնտեսության մասին, վորովհետև նա չէր կարող մի ուրիշի վրա բարդել պատասխանատվությունն այդ տնտեսության համար, վորը հանդիսանում էր նրա անձնական տնտեսությունը, և չէր կարող հույս դնել ուրիշի վրա, բացի իրենից: Այն ժամանակ մենատնտեսն ինքը պետք է հոգար ցանքի մասին, բերքահավաքի մասին և առհասարակ գյուղատնտեսական աշխատանքի բոլոր պրոցեսների մասին, յեթե նա չէր ուզում առանց հացի մնալ և սովի զոհ գնալ: Գործն էապես փոխվեց կոլեկտիվ տնտեսության անցնելուց հետո: Կոլտնտեսությունն անհատական տնտեսություն չէ: Կոլտնտեսականները հենց այդպես էլ ասում են այժմ. «Կոլտնտեսությունը և՛ իմն է, և՛ իմը չէ: Նա իմն է, բայց միևնույն ժամանակ նա պատկանում է Իվանին, Ֆիլիպպին, Միխայիլին և կոլտնտեսության մյուս անդամներին. կոլտնտեսությունն ընդհանուրինն է»: Այժմ նա, կոլտնտեսակա-



նը, — յերեկվա մենատնտեսը և այսորվա կոլեկտիվիստը, — այժմ նա կարող է պատասխանատվությունը գցել և հույսը դնել կոլտնտեսության մյուս անդամների վրա, գիտենալով, վոր կոլտնտեսությունն առանց հացի չի թողնի նրան: Այդ պատճառով նրա՝ կոլտնտեսականի հոգսերը պակասեցին, համեմատած անհատական տնտեսություն ունեցած ժամանակվա հետ, վորովհետև տնտեսության հոգսերը և պատասխանատվությունն այժմ բաշխված են բոլոր կոլտնտեսականների միջև:

Ի՞նչ է հետևում դրանից: Դրանից հետևում է այն, վոր այժմ տնտեսությունը վարելու պատասխանատվության ծանրության կենտրոնն առանձին գյուղացիներից անցել է կոլտնտեսության ղեկավարությանը, կոլտնտեսության ղեկավարող կորիզին: Այժմ գյուղացիները պահանջում են հոգ տանել տնտեսության մասին և խելացի կերպով վարել գործը, վոչ թե իրենցից, այլ կոլտնտեսության ղեկավարությունից, կամ ավելի ճիշտ՝ վոչ այնքան իրենցից, վորքան կոլտնտեսության ղեկավարությունից: Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր այժմ արդեն կուսակցությունը չի կարող սահմանափակվել գյուղատնտեսության զարգացման պրոցեսին միջամտելու առանձին ակտերով: Նա պետք է այժմ իր ձեռքը վերցնի կոլտնտեսությունների ղեկավարությունը, պատասխանատվություն ստանձնի աշխատանքի համար և ոգնի կոլտնտեսականներին՝ առաջ տանելու իրենց տնտեսությունը գիտության ու տեխնիկայի տվյալների հիման վրա:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Կոլեկտիվ տնտեսությունը խոշոր տնտեսություն է: Սակայն խոշոր տնտեսությունը չի կարելի վարել առանց պլանի: Հողագործության մեջ հարյուրավոր, իսկ յերբեմն նաև հազարավոր տնտեսություններ ընդգրկող խոշոր տնտեսությունը կարելի յե վարել միմիայն պլանային ղեկավարության կարգով: Առանց դրան նա կքայքայվի ու կկործանվի: Ահա ձեզ կոլտնտեսական կարգերի մի նոր պայման ևս, վորն արմատապես տարբերվում է անհատական մանր տնտեսություն վարելու պայմաններից: Կարելի՞ յե արդյոք այդպիսի տնտեսության վարելու գործը թողնել այսպես ասած իրերի բնական ընթացքին՝ ինքնահոսին: Պարզ է, վոր չի կարելի: Այդպիսի տնտեսություն վարելու համար պետք է ապահովել կոլտնտեսությունը տարրական գրագիտություն ունեցող, տնտեսության պլանավորելու և կազմակերպված ձևով վարելու ընդունակ մարդկանց փո-

րոշ մեխանիզմով: Հասկանալի յե, վոր առանց խորհրդային իշխանության սիստեմատիկ միջամտությունը կոլտնտշինարարության գործում, առանց նրա սիստեմատիկ ոգնության, հնարավոր չե կազմակերպել այդպիսի տնտեսություն: Իսկ ի՞նչ ե հետեւում դրանից: Դրանից հետեւում ե այն, վոր կոլտնտեսական կարգերը չեն նվազեցնում, այլ ավելացնում են կուսակցության ու կառավարության հոգացողությունն ու պատասխանատվությունը գյուղատնտեսության զարգացման ասպարեզում: Դրանից հետեւում ե, վոր կուսակցությունը, յեթե նա ուզում ե ղեկավարել կոլտնտեսական շարժումը, պետք ե թափանցի կոլտնտեսական կյանքի ու կոլտնտեսական ղեկավարության բոլոր մանրամասնությունների մեջ: Դրանից հետեւում ե, վոր կուսակցությունը չպետք ե նվազեցնի, այլ բազմապատկի իր կապերը կոլտնտեսությունների հետ, վոր նա պետք ե գիտենա կոլտնտեսություններում տեղի ունեցող անցուդարձերը, վորպեսզի ժամանակին ոգնության հասնի և կանխի կոլտնտեսություններին սպառնացող վտանգը:

Իսկ ի՞նչ ենք տեսնում մենք իրականում: Իրականում մենք տեսնում ենք, վոր մի շարք շրջանային ու մարզային կազմակերպություններ կտրված են կոլտնտեսությունների կյանքից, նրանց պահանջներից: Նստած են մարդիկ գրասենյակներում և ինքնագոհ կերպով ճռռացնում են գրիչը, առանց նկատելու, վոր կոլտնտեսությունների զարգացումն ընթանում ե բյուրոկրատիկ գրասենյակների կողքով: Առանձին դեպքերում կոլտնտեսություններից կտրված լինելը հասել ե այն աստիճանի, վոր յերկրային կազմակերպությունների մի քանի անդամներ իրենց յերկրի կոլտնտեսությունների գործերին տեղեկացել են վոչ թե համապատասխան շրջանային կազմակերպություններից, այլ Կենտկոմի անդամներից Մոսկվայում: Այդ ցավալի յե, բայց փաստ ե, ընկերնե՛ր: Անհատական տնտեսություններից կոլտնտեսություններին անցնելու հետեւանքը պետք ե հանգեր կոմունիստների ղեկավարության ուժեղացմանը գյուղում: Բայց իրոք մի շարք դեպքերում այդ անցման հետեւանքը յեղավ այն, վոր կոմունիստները նիրհեցին դափնիների վրա, հոխորտալով կոլեկտիվացման բարձր տոկոսով և գործը թողին ինքնահոսի, գործը թողին իրերի բնական ընթացքին: Կոլեկտիվ տնտեսության պլանային ղեկավարման պրոբլեմը պետք ե դրդեր կոմունիստներին ուժեղացնել իրենց ղեկավարությունը կոլտնտեսություններում, բայց իրականում մի շարք դեպ-



քերում ստացվեց այն, վոր կոմունիստները մնացին ձեռնունայն, իսկ կոլտնտեսություններում գործ եյին տեսնում նախկին սպիտակ սպաները, նախկին պետլյուրականները և ընդհանրապես բանվորների ու գյուղացիների թշնամիները:

Այդ ե մեր գյուղի աշխատանքի թերությունների յերկրորդ պատճառը:

3) Մեր գյուղի աշխատանքի թերությունների յերրորդ պատճառն այն ե, վոր մեր ընկերներից շատերը գերագնահատեցին կոլտնտեսությունները վորպես տնտեսության նոր ձև, գերագնահատեցին և սրբացրին կոլտնտեսությունները: Նրանք գտան, թե քանի վոր կան կոլտնտեսությունները վորպես տնտեսության սոցիալիստական ձև, ապա դրանով արդեն կա ամեն ինչ, դրանով արդեն ապահովված ե կոլտնտեսությունների գործի կանոնավոր վարումը, կոլեկտիվ տնտեսության ճիշտ պլանավորումը, կոլտնտեսությունների վերածումն օրինակելի սոցիալիստական տնտեսությունների: Նրանք չհասկացան, վոր կոլտնտեսությունները՝ իրենց կազմակերպչական կառուցվածքով, դեռ թույլ են և կարիք ունեն կուսակցության լուրջ ոգնությանը՝ թե՛ այդ տնտեսություններին ստուգված բոլշեւիկյան կադրեր մատակարարելու իմաստով և թե՛ կոլտնտեսության գործերի ընթացիկ ղեկավարման մասով: Սակայն այդ դեռ բոլորը չե և նույնիսկ գլխավորը չե: Այստեղ գլխավոր թերությունն այն ե, վոր մեր ընկերներից շատերը գերագնահատեցին կոլտնտեսությունների՝ վորպես գյուղատնտեսության կազմակերպման նոր ձևի՝ ուժերն ու հնարավորությունները: Նրանք չհասկացան, վոր կոլտնտեսությունը, չնայած վոր հանդիսանում ե տնտեսության սոցիալիստական ձև, ինքնին դեռ ամենևին չի ապահովված ամեն տեսակի վտանգներից, դեռ ամենևին յերաշխիք չի տալիս, վոր կոլտնտեսության ղեկավարության մեջ մուտք չեն գործի ամեն տեսակ հակահեղափոխական տարրեր, չի ապահովված այն բանից, վոր վորոշ պայմաններում հակահեղափոխական տարրերն իրենց նպատակների համար կարող են ոգտագործել կոլտնտեսությունները:

Կոլտնտեսությունը տնտեսական կազմակերպության սոցիալիստական ձև ե, այնպես, ինչպես խորհուրդները հանդիսանում են քաղաքական կազմակերպության սոցիալիստական ձևը: Ինչպես կոլտնտեսությունները, այնպես ել խորհուրդները հանդիսանում են մեր հեղափոխության մեծագույն նվաճումը, բանվոր դասա-

կարգի մեծագույն նվաճումը: Սակայն կոլտնտեսությունները և խորհուրդները ներկայացնում են սոսկ կազմակերպման ձև, ճիշտ է՝ սոցիալիստական ձևը, սակայն այնուհանդերձ կազմակերպման ձևը: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ բովանդակություն կդրվի այդ ձևի մեջ: Մենք գիտենք դեպքեր, յերբ բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդները վորոշ շրջանում պաշտպանել են հակահեղափոխությունը՝ հեղափոխության դեմ: Այդպես է յեղել գործը մեզ մոտ ԽՍՀՄ-ում, օրինակ՝ 1917 թվականի հուլիսին, յերբ խորհուրդները ղեկավարում եյին մենշևիկներն ու եսէռները, խորհուրդները հովանավորում եյին հակահեղափոխությունը՝ հեղափոխության դեմ: Այդպես եր գործը Գերմանիայում 1918 թվականի վերջերին, յերբ խորհուրդները ղեկավարում եյին սոցիալ-դեմոկրատները և յերբ նրանք հովանավորում եյին հակահեղափոխությունը՝ հեղափոխության դեմ: Հետևաբար բանը միայն խորհուրդները չեն, վորպես կազմակերպության ձև, թեպետ այդ ձևն իսկ հեղափոխական մեծագույն նվաճում է: Բանը նախ և առաջ խորհուրդների աշխատանքի բովանդակությունն է, բանն այն է, թե հատկապես ո՞վ է ղեկավարում խորհուրդները՝ հեղափոխականները, թե՞ հակահեղափոխականները: Հենց դրանով էլ բացատրվում է այն փաստը, վոր հակահեղափոխականները վոչ միշտ են արտահայտվում խորհուրդների դեմ: Օրինակ՝ հայտնի յե, վոր ռուսական հակահեղափոխության պարագլուխ Միլյուկովը Կրոնշտադտի ապստամբության ժամանակ կողմնակից եր խորհուրդների, բայց առանց կոմունիստների: «Խորհուրդներն առանց կոմունիստների»—ահա թե վորն եր այդ ժամանակ ռուսական հակահեղափոխության պարագլուխ Միլյուկովի լոզունգը: Հակահեղափոխականները հասկացել եյին, վոր բանն իրենք խորհուրդները չեն, այլ նախ և առաջ այն, թե ով կղեկավարի նրանց:

Նույնը պետք է ասել նաև կոլտնտեսությունների մասին: Կոլտնտեսությունները վորպես տնտեսության կազմակերպման սոցիալիստական ձև կարող են հրաշքներ գործել տնտեսական շինարարության ասպարեզում, յեթե նրանց գլուխ կանգնած են իսկական հեղափոխականներ՝ բոլշևիկները, կոմունիստները, և ընդհակառակը, կոլտնտեսությունները կարող են, վորոշ շրջանում, հակահեղափոխական ամեն տեսակ գործողությունների քող դառնալ, յեթե այնտեղ տիրություն անեն եսէռները և մենշևիկները, պետլյուրական սպաները և այլ սպիտակ գվարդիականները, նախկին դենիկինյանները և կոլչակականները: Ընդսմին պետք է նկատի ունենալ, վոր կոլտնտեսությունները, վորպես կազմակերպության ձևեր, վոչ միայն ապահովված չեն հակախորհրդային տարրերի ներս սողոսկելուց, այլ սկզբում նույնիսկ վորոշ հարմարություններ են ներկայացնում հակահեղափոխականներին այդ կոլտնտեսությունները ժամանակավորապես օգտագործելու համար: Քանի դեռ գյուղացիները վարում եյին անհատական տնտեսություն, նրանք ցիր ու ցան և բաժանված եյին իրարից, վորով հակախորհրդային տարրերի հակահեղափոխական սողոսկումները գյուղացիության միջավայրում չեյին կարող մեծ արդյունք տալ: Միանգամայն այլ պատկեր է ստացվում գյուղացիները կոլեկտիվ տնտեսության անցնելուց հետո: Այստեղ գյուղացիք հանձին կոլտնտեսությունների ունեն մասսայական կազմակերպության պատրաստի ձևը: Այդ պատճառով հակախորհրդային տարրերի թափանցումը կոլտնտեսությունների մեջ և նրանց հակախորհրդային գործունեությունը կարող են շատ ավելի մեծ արդյունք տալ: Պետք է յենթադրել, վոր այդ բոլորը հաշվի յեն առնում հակախորհրդային տարրերը: Հայտնի յե, վոր հակահեղափոխականների մի մասը, օրինակ՝ Հյուսիսային Կովկասում, ինքն է աշխատում ստեղծել կոլտնտեսությունների նման մի բան, օգտագործելով դրանք վորպես լեգալ քողարկում իր ընդհատակյա կազմակերպությունների համար: Նմանապես հայտնի յե, վոր հակախորհրդային տարրերն այն մի շարք շրջաններում, վորտեղ նրանք դեռ չեն մերկացվել և չեն ջախջախվել, ներս մտնում են կոլտնտեսությունները, նույնիսկ գովաբանում են կոլտնտեսությունները, վորպեսզի կոլտնտեսությունների ներսում հակահեղափոխական աշխատանքի բներ ստեղծեն: Նմանապես հայտնի յե, վոր հակախորհրդային տարրերի մի մասը այժմ ինքը կոլտնտեսությունների կողմնակից է հայտարարում իրեն, պայմանով, վոր կոլտնտեսություններում կոմունիստ չլինի: «Կոլտնտեսություններ առանց կոմունիստների»—ահա այսպիսի լոզունգ են վորդեգրել այժմ հակախորհրդային տարրերը: Հետևաբար բանը միայն իրենք կոլտնտեսությունները չեն, վորպես կազմակերպության սոցիալիստական ձև, այլ նախ և առաջ այն, թե ի՞նչ բովանդակություն է տրվում այդ ձևին: Նախ և առաջ բանն այն է, թե ո՞վ է կանգնած կոլտնտեսությունների գլուխ և ո՞վ է ղեկավարում վերջիններս:

Լենինիզմի տեսակետից կոլտնտեսությունները, ինչպես և խորհտնտեսությունները՝ վերցրած վորպես կազմակերպության ձև, զենք են և միմիայն զենք: Վորոշ պայմաններում այդ զենքը կարելի յե ուղղել հեղափոխության դեմ: Այն կարելի յե ուղղել հակահեղափոխության դեմ: Նա կարող է ծառայել բանվոր դասակարգին ու գյուղացիությանը: Նա կարող է ծառայել վորոշ պայմաններում բանվոր դասակարգի ու գյուղացիության թշնամիներին: Ամբողջ գործը նրանումն է, թե ո՞ւմ ձեռքին է գտնվում այդ զենքը և ո՞ւմ դեմ է ուղղվելու նա:

Այդ սկսում են հասկանալ բանվորների ու գյուղացիների թշնամիները, վորոնք ղեկավարվում են իրենց դասակարգային բնազդով: Այդ դժբախտաբար դեռ չեն հասկանում մեր միքանի կոմունիստները:

Ցեվ վորովհետև մեր միքանի կոմունիստները չեն հասկացել այդ հասարակ բանը, հենց այդ պատճառով էլ մենք ունենք այժմ այնպիսի պատկեր, վոր մի շարք կոլտնտեսություններում գործերը կառավարում են լավ դիմակավորված հակախորհրդային տարրերը, կազմակերպելով այնտեղ վնասարարություն ու սաբոտաժ:

4) Մեր գյուղի աշխատանքի թերությունների չորրորդ պատճառն այն է, վոր տեղերում գտնվող մեր մի շարք ընկերները չգիտեն վերակառուցել կուլակության դեմ մղվող պայքարի ճակատը, չեն հասկանում, վոր վերջին ժամանակներս փոխվել է դասակարգային թշնամու դեմքը, փոխվել է դասակարգային թշնամու գործելակերպը գյուղում և վոր դրա համաձայն պետք է փոխեն իրենց տակտիկան, վորպեսզի հաջողություն ձեռք բերեն: Թշնամին հասկացել է փոխված դրությունը, հասկացել է գյուղի նոր իրավակարգի ուժն ու կարողությունը և վերակառուցվել է, փոխել իր գործելակերպը՝ կոլտնտեսությունների դեմ ուղղակի գրոհ տալուց անցել է գաղտագողի աշխատանքի: Իսկ մենք այդ չենք հասկացել, նոր պայմանները չենք ըմբռնել և շարունակում ենք փնտռել դասակարգային թշնամուն այնտեղ, վորտեղ նա չկա այլևս. շարունակում ենք մեր հին տակտիկան՝ պարզ ձևով պայքարել գյուղում կուլակության դեմ, մինչդեռ նա, հենց այդ տակտիկան, վաղուց արդեն հնացել է:

Դասակարգային թշնամուն փնտռում են կոլտնտեսություններից դուրս, փնտռում են նրան, վորպես գազանային դիմագծեր



ունեցող մի մարդ, ահագին ատամներով, հաստ պարանոցով, դանակը ձեռքին: Փնտռում են այն կուլակին, վորին ճանաչում ենք մենք պլակատներից: Սակայն այդպիսի կուլակներ վաղուց արդեն չկան յերկրի յերեսին: Ներկայիս կուլակները և յենթակուլակները, գյուղի ներկայիս հակախորհրդային տարրերը մեծ մասամբ «խաղաղ», «մեղրածոր», համարյա «սուրբ» մարդիկ են, կարիք չկա կոլտնտեսությունից հեռու փնտռել նրանց. նրանք նստած են հենց կոլտնտեսության մեջ և վարում են այնտեղ պահեստապետների, ծախսարարների, հաշվետարների, քարտուղարների և այլ պաշտոններ: Նրանք յերբեք չեն ասի՝ «Կորչեն կոլտնտեսությունները»: Նրանք կոլտնտեսություններին «կողմնակից են», սակայն կոլտնտեսություններում սաբոտաժային ու վնասարար այնպիսի աշխատանք են կատարում, վոր կոլտնտեսությունները վողջ չեն պրծնի նրանց ձեռքից: Նրանք յերբեք չեն ասի՝ «Կորչեն հացամթերումները»: Նրանք հացամթերումներին «կողմնակից» են: Նրանք «միայն» դիմում են դեմագոգիայի և պահանջում են, վոր կոլտնտեսությունն անասնապահության համար յերեք անգամ ավելի մեծ ֆոնդ կազմի, քան պահանջում է գործը, վոր կոլտնտեսությունը յերեք անգամ ավելի մեծ ապահովագրական ֆոնդ կազմի, քան պահանջում է գործը, վոր կոլտնտեսությունը հանրային սննդի համար յուրաքանչյուր աշխատողին տա որական վեցից մինչև տասը ֆունտ հաց և այլն: Հասկանալի յե, վոր այդպիսի «ֆոնդերից» և հանրային սննդի համար այդքան հաց տրվելուց հետո, այդպիսի խարդախ դեմագոգիայից հետո, կոլտնտեսության տնտեսական զորությունը պետք է թուլանա և հացամթերումների համար բան չպետք է մնա:

Այդպիսի ճարպիկ թշնամուն տեսնելու և դեմագոգիայի չենթարկվելու համար պետք է ունենալ հեղափոխական զգաստություն, պետք է ընդունակություն ունենալ պատռելու թշնամու դիմակը, ցույց տալու կոլտնտեսականներին նրա իսկական հակահեղափոխական դեմքը: Սակայն գյուղում մենք շա՞տ ունենք արդյոք այդպիսի հատկություն ունեցող կոմունիստներ: Կոմունիստները հաճախ վոչ միայն չեն մերկացնում դասակարգային այդպիսի թշնամիներին, այլ ընդհակառակը՝ իրենք են յենթարկվում նրանց խարդախ դեմագոգիային և գնում են նրանց պոչից:

Չնկատելով դասակարգային թշնամուն՝ իր նոր դիմակով, և անկարող լինելով մերկացնել նրա խարդախ մեքենայություն-

ները, մեր միքանի ընկերներ հաճախ հանգստացնում են իրենց, ասելով, վոր այլևս իբր թե կուլակ չկա աշխարհում, թե հակախորհրդային տարրերը գյուղում արդեն վոչնչացվել են, շնորհիվ կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման քաղաքականության, և թե այդ պատճառով կարելի յե հաշտվել այնպիսի «չեզոք» կոլտնտեսությունների գոյության հետ, վորոնք վո՛չ բոլշևիկյան են, վո՛չ էլ հակախորհրդային, բայց վորոնք ինքնիրեն, այսպես ասած, տարերային կարգով պետք ե անցնեն խորհրդային իշխանության կողմը: Սակայն, դա խոր մոլորություն ե, ընկերնե՛ր: Կուլակները ջախջախվել են, սակայն դեռ հեռու յեն վերջնականապես վոչնչացված լինելուց: Դեռ ավելին, նրանք դեռ շուտով վերջնականապես չեն վոչնչացվի, յեթե կոմունիստները հորանջեն ու բարեհոգություն անեն, յենթադրելով, վոր կուլակներն իրենք գերեզման կմտնեն, այսպես ասած՝ իրենց տարերային զարգացման կարգով: Ինչ վերաբերում ե «չեզոք» կոլտնտեսություններին, ապա այդպիսիները չկան առհասարակ և չեն էլ կարող լինել բնության մեջ: «Չեզոք» կոլտնտեսություններն այն մարդկանց ֆանտազիան ե, վորոնց աչք ե տրված վոչինչ չտեսնելու համար: Դասակարգային այնպիսի սուր պայքարի պայմաններում, վոր գոյություն ունի այժմ մեզ մոտ, խորհրդային յերկրում, «չեզոք» կոլտնտեսությունների համար այլևս տեղ չի մնում: Այդ պայմաններում կոլտնտեսությունները կարող են լինել կամ բոլշևիկյան, կամ հակախորհրդային: Յեվ յեթե մենք չենք ղեկավարում այս կամ այն կոլտնտեսությունը, այդ նշանակում ե, վոր նրան ղեկավարում են հակախորհրդային տարրերը· այդտեղ վոչ մի տարակույս չի կարող լինել:

5) Վերջապես գյուղի մեր աշխատանքի թերության մի պատճառ ևս: Այդ պատճառն այն ե, վոր թերագնահատվում ե կոմունիստների դերն ու պատասխանատվությունը կոլտնաշինարարության ասպարեզում, թերագնահատվում ե կոմունիստների դերն ու պատասխանատվությունը հացամթերումների ասպարեզում: Խոսելով հացամթերումների դժվարությունների մասին, կոմունիստները սովորաբար պատասխանատվությունը գցում են գյուղացիների վրա, պնդելով, թե ամեն բանի մեջ մեղավոր են գյուղացիները: Սակայն այդ բնավ ճիշտ չե և միանգամայն անիրավացի: Այստեղ գյուղացիները մեղք չունեն: Յեթե խոսքը վերաբերում ե պատասխանատվության ու հանցավորության, ապա



պատասխանատվությունն ամբողջովին ու լիովին ընկնում ե կոմունիստների վրա: Այստեղ ամեն բանում մեղավոր ենք միայն մենք կոմունիստներս:

Աշխարհումս չկա և չի յեղել այնպիսի հզոր և հեղինակավոր իշխանություն, ինչպիսին ե մեր խորհրդային իշխանությունը: Աշխարհումս չկա և չի յեղել այնպիսի հզոր ու հեղինակավոր կուսակցություն, ինչպիսին ե մեր կոմունիստական կուսակցությունը: Վոչ վոք չի խանգարում և չի կարող խանգարել մեզ կոլտնտեսությունների գործն առաջ տանել այնպես, ինչպես պահանջում են կոլտնտեսությունների շահերը, պետության շահերը: Յեվ յեթե մեզ չի հաջողվում կոլտնտեսությունների գործը միշտ վարել այնպես, ինչպես պահանջում ե լենինիզմը, յեթե մենք հաճախ թույլ ենք տալիս մի շարք կոպիտ, աններելի սխալներ, որինակ՝ հացամթերման գծով, ապա մեղավոր ենք մենք, և միմիայն մենք:

ՄԵՆՔ ենք մեղավոր, վոր չկարողացանք տեսնել հացահատիկի կոլտնտեսային առևտրի բացասական կողմերը և թույլ տվինք մի շարք ամենակոպիտ սխալներ: ՄԵՆՔ ենք մեղավոր, վոր մեր մի շարք կազմակերպությունները կտրվեցին կոլտնտեսություններից, հանգստացան դափնիների վրա և անձնատուր յեղան ինքնահոսի տարերքին: ՄԵՆՔ ենք մեղավոր, վոր մեր մի շարք ընկերները մինչև այժմ էլ գերագնահատում են կոլտնտեսությունները վորպես մասսայական կազմակերպության ձև, չհասկանալով, վոր բանը վոչ այնքան ինքը ձևն ե, վորքան այն, վոր ինքներս ստանձնենք կոլտնտեսությունների ղեկավարությունը և դուրս շպրտենք կոլտնտեսությունների ղեկավարությունից հակախորհրդային տարրերին: ՄԵՆՔ ենք մեղավոր, վոր չտեսանք նոր պայմանները և չհասկացանք գաղտագողի գործող դասակարգային թշնամու նոր գործելակերպը:

Հարց ե ծագում, թե ինչ մեղք ունեն այստեղ գյուղացիները:

Յես գիտեմ կոլտնտեսությունների ամբողջ խմբեր, վորոնք զարգանում ու ծաղկում են, կանոնավոր կերպով կատարում են պետության առաջադրանքները և որեցոր ամրանում են տնտեսապես: Մյուս կողմից յես գիտեմ նաև այդ կոլտնտեսություններին հարևան այնպիսի կոլտնտեսություններ, վորոնք չնայած առաջինների հետ միատեսակ բերք ունենալուն և նրանց հետ միատեսակ ոբյեկտիվ պայմանների մեջ գտնվելուն, ուժասպառ են լինում ու քայքայվում: Ի՞նչն ե դրա պատճառը: Դրա պատճառն

այն է, վոր կոլտնտեսությունների առաջին խմբում ղեկավարում են իսկական կոմունիստներ, իսկ յերկրորդ խմբում ղեկավարում են փալաս մարդիկ, ճիշտ է՝ կուսակցական տոմսը գրպանում, սակայն և այնպես փալաս մարդիկ:

Հարց է ծագում՝ ի՞նչ մեղք ունեն այստեղ գյուղացիները:

Կոմունիստների դերի ու պատասխանատվության թերագնահատման հետևանքն է հանդիսանում այն, վոր հաճախ մեր գյուղի աշխատանքի թերությունների պատճառը փնտրում են վոչ այնտեղ, վորտեղ պետք է փնտրել, և այդ պատճառով թերությունները չեն վերացվում:

Վոչ թե գյուղացիների մեջ պետք է փնտրել հաջողությունների գործում մեր հանդիպած դժվարությունների պատճառը, այլ հենց մեր սեփական շարքերում, վորովհետև մենք կանգնած ենք իշխանության գլուխ, մեր տրամադրության տակ կան պետության միջոցները, մենք կոչված ենք ղեկավարելու կոլտնտեսությունները և մենք պետք է կրենք գյուղի աշխատանքի լիակատար պատասխանատվությունը:

Սրանք են այն գլխավոր պատճառները, վորոնք վորոշեցին գյուղի մեր աշխատանքի թերությունները:

Կարելի յե կարծել, թե յես շատ մռայլ պատկեր նկարեցի, թե մեզ մոտ գյուղի ամբողջ աշխատանքը բաղկացած է միմիայն թերություններից: Սակայն դա ճիշտ չէ, իհարկե: Իրոք մեր գյուղի աշխատանքը, այդ թերությունների հետ միասին, ունի նաև մի ամբողջ շարք ամենալուրջ և վճռական նվաճումներ: Սակայն յես ճառի սկզբում արդեն ասացի, վոր իմ նպատակը չէ ընութագրել մեր նվաճումները, վոր յես մտադրվեցի խոսել մեր գյուղի աշխատանքի թերությունների մասին միայն:

Հնարավո՞ր է արդյոք ուղղել այդ թերությունները: Անպայման հնարավոր է: Կուղղե՞նք արդյոք մենք այդ թերությունները ամենամոտ ժամանակում: Այո, անպայման կուղղենք: Այդտեղ վոչ մի տարակույս լինել չի կարող:

Յես կարծում եմ, վոր մեքենատրակտորային կայանների և խորհտնտեսությունների քաղ-բաժինները հանդիսանում են այն վճռական միջոցներից մեկը, վորոնց ոգնությամբ կարելի յե ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել այդ թերությունները:

(Բուռն, յերկարատև ծափեր):



## 2

# ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ-Ի ՅԵՎ ԿՎՀ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ
ԸՆԿ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ, ԸՆԴՈՒՆՎԱԾ 1933 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ

## I. ԳՅՈՒՂՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության հետագա վերելքի և նրա սոցիալիստական վերակառուցման ավարտելու համար մղվող պայքարը ներկայումս հանդիսանում է կուսակցության կարևորագույն խնդիրը:

Չքավոր-միջակ գյուղացիության հիմնական մասսաների կոլեկտիվացումը, կոլտնտեսությունների արտադրական-տեխնիկական բազայի ընդարձակումը և խորհտնտեսական շինարարության զարգացումն անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին գյուղատնտեսության հետագա վերելքի, ինդուստրացման մթերային ու հումքային բազայի ամրապնդման և ինչպես կոլտնտեսությունների, այնպես էլ առանձին կոլտնտեսականների յեկամտի անընդհատ աճման համար:

Այդ խնդիրների հաջող լուծմանը կատաղի ընդդիմադրություն են ցույց տալիս գյուղի հակախորհրդային տարրերը: Տնտեսապես ջախջախված, բայց դեռ վերջնականապես իրենց ազդեցությունը չկորցրած՝ կուլակը, նախկին սպիտակ սպաները, նախկին տերտերները, նրանց վորդիները, կալվածատերերի ու շաքարի գործարանատերերի նախկին կառավարիչները, նախկին ուրյադնիկները և գյուղում նստած՝ բուրժուա-ազգայնական, և այդ թվում եսերական ու պետլյուրովյան ինտելիգենցիայից դուրս յեկած՝ հակախորհրդային այլ տարրեր, ամեն կերպ աշխատում են քայքայել կոլտնտեսությունները, աշխատում են վիժեցնել կուսակցության ու կառավարության ձեռնարկումները գյուղատնտեսու-

թյան բնագավառում, այդ նպատակով օգտագործելով կոլտնտեսականների մի մասի անգիտակցությունն՝ ընդդեմ հանրային, կոլտնտեսական շահերի, ընդդեմ կոլտնտեսական գյուղացիության շահերի:

Սողոսկելով կոլտնտեսության մեջ վորպես հաշվետարներ, անասնավարներ, պահեստապետներ, բրիգադիրներ և այլն, իսկ հաճախ նաև վորպես կոլտնտեսության վարչության ղեկավար աշխատողներ, հակախորհրդային տարրերը ձգտում են վնասարարություն կազմակերպել. փչացնում են մեքենաները, ցանում են չհերկված հողամասերը, հափշտակում են կոլտնտեսական բարիքը, խախտում են աշխատանքային դիսցիպլինան, կազմակերպում են սերմացուի գողություն, գաղտնի ամբարներ, հացամթերումների սաբոտաժ, իսկ յերբեմն նրանց հաջողվում է քայքայել կոլտնտեսությունները:

Ծպտվելով խորհտնտեսություն վորպես անասնավարներ, հաշվապահներ, դաշտավարներ, պահեստապետներ, բաժանմունքի վարիչներ և այլն, այդ հակախորհրդային տարրերը վնաս են հասցնում խորհտնտեսական շինարարությանը՝ դիտավորյալ կերպով կոտրատելով տրակտորները, կոմբայնները, վատ մշակելով հողը, վատ խնամելով անասուններին, խախտելով աշխատանքային դիսցիպլինան, հափշտակելով խորհտնտեսական գույքը, հատկապես նրա մթերքները (հացահատիկ, միս, կաթ, յուղ, բուրդ և այլն):

Այդ բոլոր հակախորհրդային և հակակոլտնտեսային տարրերը հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ — նրանք ձգտում են վերականգնել կալվածատերերի ու կուլակների իշխանությունը՝ աշխատավոր գյուղացիության վրա, նրանք ձգտում են վերականգնել ֆաբրիկանտների ու գործարանատերերի իշխանությունը բանվորների վրա:

Կոմունիստներից և նրանց համակրող անկուսակցականներից հատուկ զգոնություն է պահանջվում՝ հակահարված կազմակերպելու այդ հակաժողովրդական տարրերի դեմ և ջախջախելու նրանց մինչև վերջ:

Մինչդեռ գյուղական կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները, այդ թվում նաև խորհտնտեսությունների ու ՄՏ կայանների բջիջները, վորոնք հաճախ զուրկ են լինում հեղափոխական հոտառությունից ու զգոնությունից, մի շարք տեղերում վոչ միայն թշնամի տարրերի այդ հակախորհրդային աշխատանքին չեն հակադրում դասակարգային զգոնություն և ամենորյա բոլշևիկյան պայքար՝ խորհրդային ազդեցությունը կոլտնտեսականների ու խորհտնտեսությունների աշխատողների անկուսակցական լայն մասսաների վրա ուժեղացնելու համար, այլ յերբեմն իրենք են ընկնում այդ վնասարար տարրերի ազդեցության տակ, իսկ կուսակցության անդամներից վոմանք, վորոնք խցկվել են կուսակցության մեջ կարիերիստական նպատակներով, միանում են կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների ու խորհրդային իշխանության թշնամիների հետ և նրանց հետ միասին կազմակերպում են սերմացուի գողություն ցանքի ժամանակ, հացահատիկի գողություն՝ հնձի ու կալսելու ժամանակ, հացահատիկը թաքցնում են գաղտնի ամբարներում ու սաբոտաժ են կազմակերպում հացամթերումների ժամանակ և, նշանակում է, առանձին կոլտնտեսություններին, կոլտնտեսականների խմբերին և խորհտնտեսությունների հետամնաց աշխատողներին պայքարի յեն քաշում խորհրդային իշխանության դեմ:

Այս հատկապես վերաբերում է խորհտնտեսություններին, ուր հաճախ խորհտնտեսության դիրեկտորները հակախորհրդային տարրերի ազդեցության տակ՝ բյուրոկրատական այլասերման են յենթարկվում, սաբոտաժի յեն յենթարկում խորհրդային իշխանության առաջադրանքները, ուղղակի կերպով խաբում են կուսակցությանն ու կառավարությանը և փորձ են անում պետական, խորհտնտեսական արտադրանքը տնօրինել վորպես իրենց անձնական սեփականություն:

Այդ կապակցությամբ գյուղական կոմունիստների և կոմյերիտականների առաջ ներկայումս կանգնած են կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում իսկական կուսակցական ու խորհրդային ակտիվ կազմակերպելու և նրան ղեկավարելու խնդիրները, կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում մեծամասնությունը նվաճելու և կոլտնտեսություններից ու խորհտնտեսություններից՝ այնտեղ խցկված հակախորհրդային տարրերին՝ առաջին հերթին անասնավարների, հաշվետարների, հաշվապահների ու պահեստապետների շարքերից դուրս վռնդելու խնդիրները, կոլտնտեսական ու խորհտնտեսական գույքի հափշտակման դեմ և սերմացուի հանձման ու ցանքի, բերքահավաքի ու կալսելու, հացամթերումների ու մսամթերումների պլանների կատարման և այլն գծով, կուսակցության ու կառավարության ձեռնարկումների սաբոտաժ կազմակերպողների նկատմամբ վարչական ու պատժիչ միջոցներ ձեռք առնելու մասին խորհրդային

իշխանության հրատարակած օրենքների համառ ու հետևողական կիրառման համար պայքարելու խնդիրները և այլն:

Գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու և խորհրդային ազդեցությունը կոլտնտեսականների վրա անընդհատ ուժեղացնելու ամենագլխավոր լծակը հանդիսանում են մեքենա-տրակտորային կայանները և խորհտնտեսությունները՝ որպես սոցիալիստական գյուղատնտեսության խոշորագույն գործարաններ:

Մեքենա - տրակտորային կայաններն ու խորհտնտեսություններն ամուր տեղ են նվաճել սոցիալիստական գյուղատնտեսության մեջ, որպես հանրայնացված տնտեսության սիստեմի կազմակերպիչներ: Սակայն, չնայած գյուղատնտեսության տեխնիկական վերազինման ու սոցիալիստական վերակառուցման գործում ՄՏ կայանների ունեցած խոշորագույն կազմակերպչական-տնտեսական դերին ու ազդեցությանը, նրանց քաղաքական ազդեցությունը կոլտնտեսական լայն մասսաների վրա դեռևս միանգամայն անբավարար է: ՄՏ կայանները հաճախ չունեն քաղաքական դեմք: ՄՏ կայանների ներսում շատ հաճախ ծաղկում են հանցավոր, անփույթ վերաբերմունքը դեպի կուսակցության ու կառավարության առաջադրանքները, հանցավոր վերաբերմունքը դեպի պետական գույքը, կոլտնտեսական գույքի ու պետական սեփականության գողությունն ու հափշտակությունը: Դասակարգայնորեն թշնամի տարրերը հաճախ թափանցում են և՛ ՄՏ կայանների ներսը, ներքուստ աշխատանք տանելով կոլտնտեսականների վրա հակախորհրդային ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ:

Այս զգալի չափով վերաբերում է և՛ խորհտնտեսություններին: Չնայած գյուղատնտեսության տեխնիկական վերազինման ու սոցիալիստական վերակառուցման գործում խորհտնտեսությունների ունեցած առաջատար դերին, նրանց քաղաքական ու տնտեսական ազդեցությունը կոլտնտեսությունների վրա մինչև այժմ դեռ անբավարար է: Խորհտնտեսությունների տեխնիկական սպառազինմանը տիրապետելու ու այն օգտագործելու ուղղությամբ օրինակելի աշխատանք կատարելու և գործնականում գյուղատնտեսական խոշոր ձեռնարկության՝ մանր, անհատական տնտեսության նկատմամբ ունեցած առավելությունները ցույց տալու փոխարեն՝ խորհտնտեսություններում յերբեմն հանդես են գալիս բուրժուական տենդենցներ, ծաղկում է հանցավոր, անփույթ վերաբերմունք դեպի պետական գույքը, բարբարոս վերաբերմունք՝ դեպի տրակտորը, ավտոմեքենան, կոմբայնն ու անասունը, հա-



փչացվում ու չայլվում-փտանվում է խորհտնտեսությունների արտադրանքը, չի կատարվում կուսակցության առաջադրանքը՝ արտադրանքը պետությանը հանձնելու մասին:

ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղաքական ամրապնդման, ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղաքական դերն ու ազդեցությունը գյուղի նկատմամբ բարձրացնելու և կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում մեր բջիջների քաղաքական ու տնտեսական աշխատանքը վճռականորեն բարելավելու նպատակով ՀամԿ (բ) Կ Կենտկոմը որոշել է—բոլոր մեքենա-տրակտորային կայաններում և խորհտնտեսություններում կազմակերպել քաղբաժիններ, որոնց պետք է գլխավորեն ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորների տեղակալները քաղաքական մասի գծով, որոնք միաժամանակ հանդիսանում են ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղբաժինների պետեր:

## II. ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղբաժինները պետք է մեկ կողմից՝ կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում մասսայական-քաղաքական աշխատանք ծավալելու և մյուս կողմից՝ կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման միջոցով լրացնեն ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների տնտեսական-տեխնիկական աշխատանքը՝ լուծելու սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացման, անասունների լավագույն խնամքի, աշնանային ու գարնանային ցանքը ժամանակին կազմակերպելու, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների բոլոր պարտավորությունները պետության հանդեպ ժամանակին ու լրիվ կատարելու ասպարեզում կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների առաջ դրված խնդիրները:

ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղբաժինները պետք է ապահովեն կուսակցական աչքն ու հսկողությունը ինչպես իրենց՝ ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների, այնպես և ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների աշխատանքի ու կյանքի բոլոր բնագավառներում: Սերմացուի վորակի ապահովումը ցանքի շրջանում, սերմացուի հափշտակման կանխումը, հսկողությունը կալսելու աշխատանքների ճիշտ կատարման վրա, պայքարը կալսված հացահատիկի հափշտակում-

ների դեմ, պայքարն աշխատանքի դուրս չգալու դեմ, ուշադիր խնամքի ապահովումը կոլտնտեսության և խորհտնտեսության կենդանի ու մեռյալ ինվենտարի նկատմամբ, կոլտնտեսություններից և խորհտնտեսություններից բոլոր վնասարար, հակախորհրդային ու հակակոլտնտեսային տարրերին դուրս վռնդելը, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների համար լավագույն, ստուգված կադրերի ընտրություն կատարելը, այս բոլոր և նրանց նման հարցերը պետք է կանգնած լինեն քաղբաժինների ուշադրության կենտրոնում:

ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղբաժինները պետք է ապահովեն քաղաքական հսկողությունը կոլտնտեսականների ու խորհտնտեսության աշխատողների ուժերի դասավորման ու ոգտագործման վրա, հիշելով այդ դեպքում, վոր նրանից, թե ով է աշխատում շարքացանի վրա, կալսող մեքենայի վրա, անասնապահական խորհտնտեսության բաժանմունքում, հացահատիկի և կոլտնտեսական ու խորհտնտեսական վողջ գույքի հաշվառման ապարատում՝ կախված է՝ հանրային կոլտնտեսական ու խորհտնտեսական սեփականության պահպանությունը — կախված են կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների հաջողությունները:

ՄՏ կայանների քաղաքական բաժինների առաջնակարգ խնդիրն է՝ ապահովել կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների կողմից պետության հանդեպ իրենց պարտավորությունների անպայման ու ժամանակին կատարումը, և հատկապես վճռական պայքարը կոլտնտեսական բերքի հափշտակման դեմ, պայքարը հացամթերումների ու մսամթերումների բնագավառում կուլակցության ու կառավարության ձեռնարկումների նկատմամբ կոլտնտեսություններում սաբոտաժ կազմակերպելու արտահայտությունների դեմ:

Խորհտնտեսությունների քաղբաժինների առաջնակարգ խնդիրն է՝ ապահովել խորհտնտեսությունների կողմից պետության հանդեպ իրենց պարտավորությունների անպայման ու ժամանակին կատարումը և հատկապես վճռական պայքարն առանձին դիրեկտորների և նրանց տեղակալների փորձերի դեմ՝ խորհտնտեսության իրենց նեղ շահերը պետության ընդհանուր շահերին հակադրելու փորձերի դեմ, մթերքների ավելցուկները պետությանը հանձնելու փոխարեն այն թաքցնելու արտահայտությունների դեմ:

ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղբաժինները պետք է ապահովեն հանրային սեփականության հափշտակում և



գյուղատնտեսության բնագավառում կուլակցության ու կառավարության ձեռնարկումների դեմ սաբոտաժ կազմակերպողների նկատմամբ վարչական ու պատժիչ միջոցների մասին խորհրդային կառավարության հրատարակած որենքների համառ, ճիշտ ու իր ժամանակին կիրառումը:

Այդ բոլոր պատժիչ միջոցների, ինչպես և վերոհիշյալ հանցանքների համար դատական մարմինների կայացրած վորոշումների մասին քաղաքական բաժինները պետք է իրազեկ դարձնեն կոլտնտեսական լայն մասսաներին ու խորհտնտեսության աշխատողներին, նման փաստերի շուրջը և նրանց հիման վրա կոլտնտեսականների ու խորհտնտեսության բանվորների մեջ ծավալելով լայն մասսայական-բացատրական ու դաստիարակչական աշխատանք:

Այս բոլոր խնդիրները ՄՏ կայանների և խորհտնտեսությունների քաղբաժինները պետք է իրականացնեն խորհտնտեսություններում ու ՄՏ կայաններում և նրա կողմից սպասարկվող կոլտնտեսություններում կուսակցության անդամների ու կոմյերիտմիության մեջ կազմակերպական-կուսակցական և քաղաքական-դաստիարակչական աշխատանք ծավալելու ճանապարհով, կոլտնտեսականների ու խորհտնտեսության բանվորների մեջ մասսայական քաղաքական աշխատանք կազմակերպելու ճանապարհով, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կուսակցական ու կոմյերիտական ուժերի և կոլտնտեսական գործին նվիրված անկուսակցական ակտիվի ճիշտ ընտրության ու դասավորման ճանապարհով, կոլտնտեսական կադրերի ամենորյա ուսումնասիրության և ավելի քան առաջավոր, անվերապահորեն նվիրված ակտիվիստ-կոլտնտեսականներին արտադրության պատասխանատու, վճռական բնագավառներն առաջ քաշելու ճանապարհով:

Բաց անելով այս կամ այն հաշվետարի ու տնտեսվարի վնասարար աշխատանքի փաստերը կոլտնտեսության մեջ, մերկացնելով բուրժուական տենդենցները խորհտնտեսություններում, մերկացնելով յենթակուլակներին ու հափշտակումներ կազմակերպողներին կոլտնտեսություններում — կոլտնտեսության վարչության անդամների շարքերում, վճռական պայքար մղելով կոլտնտեսական ու խորհտնտեսական սեփականությունը հափշտակողների, պակողների ու լոդրերի դեմ, կոլտնտեսության և խորհտնտեսության կենդանի ու մեռյալ ինվենտարի նկատմամբ անփույթ ու անբարեխիղճ վերաբերմունքի դեմ, — ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղաքական բաժինները պետք է կոլտնտեսություն-

ների ու խորհտնտեսությունների ամենօրյա կյանքից ու աշխատանքից վերցված կոնկրետ փաստերի հիման վրա կազմակերպեն կոլտնտեսականների ու խորհտնտեսության աշխատողների լայն մասսայի պայքարը կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման համար, հանրային կոլտնտեսական ու խորհտնտեսական սեփականության պահպանման ու անձեռնմխելիության համար, կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների եկամուտների աճման համար, կոլտնտեսականների ու խորհտնտեսությունների կողմից պետության հանդեպ իրենց բոլոր պարտավորությունները ժամանակին ու լրիվ կատարելու համար:

ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղբաժինները պետք է կանխեն և պայքար մղեն կուսակցության ու կառավարության որոշումների խախտման ու աղավաղումների դեմ, մերկ ճնշման ու վարչարարության մեթոդների կիրառման դեմ, հիշելով, որ վերոհիշյալ խնդիրների լուծումը հնարավոր է միայն կազմակերպական-տնտեսական ղեկավարությունն ամեն կերպ բարելավելու ու ամրապնդելու պայմանով, կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում կուլակի ու նրա գործակալության դեմ պրոլետարական դիկտատուրայի բոլոր լծակները կիրառելու դեպքում, կոլտնտեսականների մեջ քաղաքական-դաստիարակչական լայն աշխատանք ծավալելու դեպքում:

ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղաքական բաժինները ոչ մի դեպքում իրենց աշխատանքներում չպետք է փոխարինեն ՄՏ կայանի ու խորհտնտեսության դիրեկտորին, հիշելով, որ կայանի ու խորհտնտեսության տնտեսական ղեկավարությունն իրականացվում է ՄՏ կայանի ու խորհտնտեսության դիրեկտորի կողմից միանձնյա ղեկավարության սկզբունքով, հիշելով, որ քաղբաժինները պետք է իրենց մասսայական-քաղաքական, կազմակերպական-կուսակցական ու դաստիարակչական աշխատանքներով ոգնեն ՄՏ կայանի ու խորհտնտեսության դիրեկտորի առաջ դրված խնդիրների լուծմանը:

Ներկա մոմենտում քաղբաժնի ու նրա պետի առաջին խնդիրն է՝ կոփել ՄՏ կայանի ներսի և ՄՏ կայանի կողմից սպասարկվող կոլտնտեսությունների, ինչպես և խորհտնտեսությունների ու նրա բաժանմունքների կուսակցական ու կոմյերիտական ակտիվը, չընկնելով անդամների քանակի հետևից, այլ գլխավոր ուշադրությունը դարձնելով նրանց որակի վրա, նրանց՝ կուսակցությանը նվիրված լինելու և կոլտնտեսականներին ու խորհտնտեսության



աշխատողներին իրենց հետևից տանելու ընդունակության վրա:

Երկրորդ խնդիրը, որը պետք է լուծվի առաջինի հետ սերտորեն կապված, դա անկուսակցական ակտիվը կուսակցական-կոմյերիտական բջիջների շուրջը համախմբելն է, ամենևին չմեկուսանալով անկուսակցական կոլտնտեսականներից ու խորհտնտեսության բանվորներից, այլ ընդհակառակը, նրանց հետ կապ ու համագործական հարաբերություններ հաստատելով, հասնել այն բանին, որպեսզի կոլտնտեսությունները, բոլոր կոլտնտեսություններն առանց բացառության՝ իրենց ղեկավարությամբ դառնան բոլշևիկյան:

Քաղբաժինը և նրա կողմից ղեկավարվող գյուղական կուսակցականներն ու կոմյերիտականները պետք է ամեն կերպ ներգրավեն լավագույն անկուսակցական կոլտնտեսականներին ու խորհտնտեսության բանվորներին, մասնակից դարձնեն նրանց բջիջների դռնբաց ժողովներին, քաղաքականապես լուսավորեն նրանց՝ կոլտնտեսական ու խորհտնտեսական շինարարության կոնկրետ խընդիրների հիման վրա, այդ եղանակով յուրաքանչյուր կոլտնտեսության ու խորհտնտեսության ներսում ստեղծելով կուսակցականների, կոմյերիտականների ու անկուսակցական կոլտնտեսականների ու բանվորների միաձույլ կորիզ, կոլտնտեսության ու խորհտնտեսության մեջ վնասարար, հակահասարակական ու հակակոլտնտեսային տարրերի դեմ պայքարելու համար:

Կուսակցականներն ու կոմյերիտականները չպետք է վախենան կոլտնտեսության ու խորհտնտեսության ներսում հակահասարակական, հակակոլտնտեսական տարրերին մեկուսացնելու և դուրս վռնդելու համար պայքարելուց, սխալ կերպով ենթադրելով, թե այդպիսի պայքարը կարող է խախտել կոլտնտեսության կամ խորհտնտեսության միասնությունը: Մեզ հարկավոր չէ ամեն տեսակի միասնություն: Մեզ հարկավոր է կոլտնտեսության կամ խորհտնտեսության այնպիսի միասնություն, որն ապահովված է բոլշևիկյան կորիզի ղեկավարությունն ու գլխավորությունը, որը պաշտպանվում է անկուսակցական ակտիվի կողմից: Իսկ այդպիսի միասնության չի կարելի հասնել, առանց հակահասարակական ու հակակոլտնտեսական տարրերին կոլտնտեսություններից ու խորհտնտեսություններից դուրս վռնդելու համար մղվող լուրջ պայքարի: Դրա համար էլ կուսակցական – կոմյերիտական բոլշևիկյան կորիզի պայքարը կոլտնտեսություններում անկուսակցական ակտիվ ստեղծելու և հակահասարակական տարրերին դուրս վռնդելու համար, կոլտնտեսություններում ու խորհտնտե-

ություններում մեծամասնություն նվաճելու համար, հանդիսանում է ներկա մոմենտի ամենակենսական խնդիրը:

Շրջանային ու գյուղական կոմունիստները պետք է հաշվի առնեն, վոր մեր կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները հանդիսանում են յերիտասարդ, դեռևս չամրապնդված տնտեսական օրգանիզմներ, վոր նրանք իրենց կազմակերպական չխնաբարության ընթացքում ապրում են մոտավորապես նույնպիսի շրջան, ինչպիսին մեր ֆաբրիկներն ու գործարաններն ապրում եյին 1920—21 թվականներին, յերբ վերջիններս դեռ ամրապնդված չեյին: Մի ինչ-վոր յերեք տարվա ընթացքում մենք կարողացանք ստեղծել ավելի քան 200 հազար կոլտնտեսություն և 5 հազար խորհտնտեսություն, այսինքն՝ ստեղծել ենք միանգամայն նոր ձեռնարկություններ, վորոնք գյուղատնտեսության համար նույն նշանակությունն ունեն, ինչ վոր գործարաններն ու ֆաբրիկներն արդյունաբերության համար: Պատմությունը չգիտե մի այլ այնպիսի յերկիր, վորը կարողանար յերեք տարում ստեղծել վոչ միայն 205 հազար, այլ թեկուզ 25 հազար նոր, խոշոր ձեռնարկություններ՝ զինված նոր տեխնիկայով: Միմիայն ԽՍՀՄ-ն, միմիայն մեր խորհրդային յերկիրը կարողացավ իրականացնել ստեղծագործական աշխատանքի այդ հրաշքը: Այդ պատճառով ծիծաղելի կլիներ պահանջել, վոր գյուղատնտեսության ասպարեզում գոյություն ունեցող այդ բոլոր բազմաթիվ նոր, խոշոր ձեռնարկությունները, ստեղծված գյուղի կուլտուրական ու տեխնիկական հետամնացության պայմաններում, միանգամից, մի տարում, դառնային օրինակելի և մեծ շահ բերող ձեռնարկություններ: Ակներև է, վոր անհրաժեշտ է ժամանակ, անհրաժեշտ է անդուլ, համբերատար, փութաջան աշխատանք՝ կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները կազմակերպորեն ամրացնելու, նրանց միջից վնասարար տարրերին դուրս վռնդելու, նրանց աշխատակիցներին խնամքով ընտրելու և նոր, ստուգված բոլշևիկյան կադրեր դաստիարակելու համար, վորպեսզի կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները դառնան իրոք օրինակելի: Յեվ նրանք անպայման օրինակելի կդառնան, ինչպես օրինակելի յեն դարձել մեր շատ գործարանները, վորոնք 1920—21 թվականներին սարքված չեյին և թույլ եյին կազմակերպված:

Ինչ վերաբերում է կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում կատարվող վնասարարության և սաբոտաժի յերևույթներին, ապա դրանք վերջիվերջո խաղալու յեն նույն բարեբար դերը կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների համար բոլշևիկյան նոր կադրեր կազմակերպելու գործում, վորը խաղացել է վնասարարությունը և «Շախտիի պրոցեսն» արդյունաբերության ասպարեզում: «Շախտիի պրոցեսը» դարձակետ հանդիսացավ կոմունիստների հեղափոխական զգաստությունն ուժեղացնելու և արդյունաբերության ասպարեզում կարմիր մասնագետներին կազմակերպելու նկատմամբ: Հիմք չկա տարակուսելու, վոր միքանի կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում տեղի ունեցած վնասարարության ու սաբոտաժի այն յերևույթները, վորոնք դրսևորվեցին այս տարի, նույնպիսի դարձակետ կհանդիսանան մեր գյուղական ու շրջանային կոմունիստների հեղափոխական զգաստությունը ծավալելու և կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների համար բոլշևիկյան նոր կադրեր ընտրելու գործում:

Յեվ այդ տեղի կունենա այնքան շուտ, վորքան շուտ ՄՏ կայանները և խորհտնտեսությունները կդառնան գյուղի քաղաքական ու կազմակերպական լայն աշխատանքի կենտրոններ:

ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղաքական բաժինները, այդպիսով, պետք է ապահովեն ներկա պահին գյուղի առավելապես տնտեսական-տեխնիկական կենտրոնները հանդիսացող ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների վերածումն ինչպես տնտեսական-տեխնիկական, այնպես էլ քաղաքական ու կազմակերպական ղեկավարության ու ազդեցության կենտրոնների՝ կոլտնտեսական լայն մասսաների նկատմամբ: ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղաքական բաժինների մասսայական, քաղաքական, կազմակերպական – կուսակցական և դաստիարակչական ամբողջ աշխատանքը պետք է նպատակ ունենա վերջնականապես չեզոքացնել դասակարգային թշնամու ազդեցությունը կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների մեջ և հաղթահարել յերեկվա մենատնտես սեփականատերերի՝ այսօրվա կոլտնտեսականի մանր-բուրժուական տրամադրությունների մնացորդներն ու սեփականատիրական տենդենցները:

Խորհտնտեսությունների ու ՄՏ կայանների քաղաքական բաժինները թե՛ իրենց՝ կայանների և թե՛ իրենց սպասարկած կոլտնտեսությունների ամենօրյա ամբողջ աշխատանքը պետք է շաղկապեն սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրների հետ, ծավալելով կուսակցության ու կոմյերիտմիության անդամների կազմակերպական – կուսակցական աշխատանքը, լենինյան դաստիարակությունը, կազմակերպելով մասսայական լայն պրոպագանդ անկուսակցական կոլտնտեսականների մեջ, իրականաց-

նելով կուսակցության ու կառավարության ձեռնարկումները գյուղատնտեսության տեխնիկական վերազինման ու վերելքի ասպարեզում, յերկրի ինդուստրացման և նրա պաշտպանունակության բարձրացման բնագավառում, բանվորների, կարմիր բանակայինների ու կոլտնտեսականների նյութական-կենցաղային պայմանների բարելավման ասպարեզում:

Կոլտնտեսականների և խորհտնտեսությունների բանվորների մեջ կատարվող քաղաքական-բացատրական ամբողջ աշխատանքի կարևորագույն առանցքը պետք է լինի՝ լայն կերպով մասսայականացնել կուսակցության ու կառավարության ձեռնարկումները հանրային՝ կոլտնտեսական ու խորհտնտեսային սեփականության անձեռնմխելիության համար մղվող պայքարում: Անհրաժեշտ է կուսակցության ու կոմյերիտմիության անդամներին, կոլտնտեսականների լայն մասսաներին և խորհտնտեսությունների բանվորներին բացատրել, վոր այդ ձեռնարկումներն ուղղված են լոդրերի, դավողների ու գողերի դեմ, վորոնք հանդիսանում են դասակարգային թշնամու գործակալները, վորոնք հանդիսանում են բանվորների ու կոլտնտեսականների թշնամիները:

Քաղաքական բաժինները պետք է աչքի առաջ ունենան, վոր կոլտնտեսականների վրա քաղաքական հաստատուն ազդեցություն ապահովել և այդ ազդեցությունը հակադրել հակախորհրդային տարրերի վոտնձգություններին կարելի յե միմիայն այն դեպքում, յեթե կոլտնտեսությունների կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները դրված են գաղափարականորեն, զինված են քաղաքականապես և հեղինակություն են վայելում կոլտնտեսականների լայն մասսայում:

ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների քաղաքական բաժինները պետք է մերկացնեն և կուսակցական ու կոմյերիտական կազմակերպություններից դուրս վռնդեն ոպորտունիստական տարրերին ու դասակարգային թշնամիների գործակալներին, վորոնք թափանցել են կազմակերպության մեջ և կատարում են իրենց դավադիր աշխատանքը, քողարկվելով կուսակցական կամ կոմյերիտական տոմսով:

Քաղաքական բաժինները պետք է ծավալեն կուսակցության ու կոմյերիտմիության գյուղի անդամների մարքսիստական-լենինյան դաստիարակությունը, սիստեմատիկաբար մաքրեն կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կուսակցական ու կոմյերիտական կազմակերպություններն անկայուն, կարիերիստական, քայքայված և դասակարգային թշնամու հետ կապված տարրերից, վճռական պայքար մղեն կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններն ինքնամփոփվելու փորձերի դեմ, գաղափարականորեն միաձուլեն կազմակերպությունը՝ պայքար մղելու կոլտնտեսական լայն մասսաների և խորհտնտեսությունների բանվորների վրա քաղաքական բոլշևիկյան ազդեցություն ձեռք բերելու և նրանց ղեկավարելու համար:

ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների քաղբաժինների կարևորագույն, առաջնակարգ խնդիրն է՝ կերտել քաղբաժնի շուրջն ամուր կորիզ կոլտնտեսական ու խորհտնտեսական բջիջների իսկական ակտիվիստներից և այդ բջիջների շուրջն ստեղծել անկուսակցական ակտիվ՝ անձնվեր, խորհրդային իշխանության համար մղվող պայքարում ստուգված կոլտնտեսականներից ու խորհտնտեսությունների բանվորներից: Կենտկոմը կրկին շեշտում է, վոր այդ աշխատանքում չպետք է քանակի հետևից ընկնել. փոքր, բայց քաղաքականորեն կոփված և պայքարում ամրակուռ դրված բջիջը միշտ կկարողանա իր հետ տանել կոլտնտեսականների ու խորհտնտեսական բանվորների ամբողջ մասսան: Դաստիարակչական ու բացատրական աշխատանք ծավալելով կոլտնտեսական բջիջներում ու անկուսակցական կոլտնտեսականների մեջ, քաղբաժիններն առաջին հերթին պետք է ապահովեն ակտիվի քաղաքական աճումը:

Քաղաքական բաժինները պետք է ապահովեն կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների առողջ աճումն իրենց առաջավոր, ակտիվ, այնպիսի կոլտնտեսականներով, վորոնք ստուգվել են կուլակի ու կոլտնտեսություններում դասվող նրա գործակալության դեմ մղվող պայքարում: Ընդունելիս քաղբաժինները պետք է յելնեն նրանից, վոր կուսակցական ու կոմյերիտական կազմակերպություններն իրենց բոլշևիկյան կոչված դերը գյուղում իրականացնել և կոլտնտեսական մասսաներին իրենց հետ տանել կարող են միմիայն այն դեպքում, յեթե նրանք բաղկացած լինեն՝ թեև փոքրաթիվ, բայց անպայման կուսակցության գործին նվիրված, դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարում գաղափարականորեն միաձուլված ու կոփված բոլշևիկներից:

Այս խնդիրները կատարելիս՝ ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների քաղաքական բաժինները չպետք է փոխարինեն տեղական շրջանային կուսակցական կոմիտեներին, այլ կատարեն իրենց աշխատանքը, լիակատար կապ պահպանելով նրանց հետ: Միևնույն ժամանակ կուսակցության շրջանային կոմիտեները պետք է ըմբռնեն, վոր ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների քաղբաժին-

ների ստեղծմամբ նրանք բնավ չեն ազատվում այն խնդիրներից ու պատասխանատվությունից, վոր դրել ե նրանց վրա կուսակցությունը:

## III. ՄՏԿ-ՆԵՐԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. ՄՏԿ-ների քաղբաժինները

ՄՏԿ-ների քաղբաժինները կազմակերպվում են յուրաքանչյուր ՄՏԿ-ում և բաղկացած են պետից, նրա յերկու տեղակալից՝ ընդհանուր կուսակցական աշխատանքի գծով, և մի ոգնականից՝ կոմյերիտական աշխատանքի գծով: ՄՏԿ-ի քաղբաժնի պետը միաժամանակ հանդիսանում ե ՄՏԿ-ի դիրեկտորի տեղակալը՝ քաղաշխատանքի գծով:

ՄՏԿ-ի քաղբաժնի պետը լրիվին իրականացնում և ՄՏԿ-ի ու նրա կողմից սպասարկվող կոլտնտեսությունների կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների ղեկավարությունը և լիակատար պատասխանատվություն ե կրում ՄՏԿ-ի կուսակցական-քաղաքական աշխատանքի համար, համաձայնեցնելով իր աշխատանքի պլանը ՄՏԿ-ի դիրեկտորի հետ:

Քաղբաժնի պետը, ոգնելով ՄՏԿ-ի դիրեկտորին նրա ամբողջ աշխատանքում, բայց վոչ մի դեպքում չփոխարինելով նրան, դիրեկտորի հետ միասին պատասխանատու յե ՄՏԿ-ի արտադրական ու մթերման պլանների կատարման համար:

ՄՏԿ-ների քաղբաժինները ՄՏ կայանների գործողության շրջաններում ամենորյա սիստեմատիկ ոգնություն են ցույց տալիս կոլտնտեսական կուսակցական ու կոմյերիտական բջիջներին, հրահանգում են նրանց, ստուգում են նրանց աշխատանքը, համաձայնեցնելով իրենց այդ գործողությունը կուսակցության տեղական շրջկոմի հետ:

ՄՏԿ-ի քաղբաժինն ակտիվ կերպով մասնակցում ե ՄՏԿ-ների կադրերի ընտրությանը և ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսությունների վարչությունների ու ծառայողների ընտրությանը, աչքի առաջ ունենալով ինչպես ղեկավար կազմը, այնպես էլ վարչական-տնտեսական աշխատողներին (տնտեսական մասի վարիչ, պահեստապետ, հաշվետար և այլն):

ՄՏԿ-ի քաղբաժնի պետն անմիջականորեն յենթարկվում ե յերկրային (մարզային) հողվարչության, ազգային հանրապետությունների Հողժողկոմատների ՄՏԿ քաղսեկտորին և պատասխանատու յե նրա առաջ իր աշխատանքի համար:



Նա միևնույն ժամանակ համաձայնեցնում ե իր աշխատանքը կուսակցության համապատասխան շրջկոմի հետ՝

ա) մտնելով շրջանային կուսկոմիտեյի կազմի մեջ.

բ) պարբերաբար ինֆորմացիա տալով շրջկոմին քաղբաժնի աշխատանքի մասին:

ՄՏԿ-ների քաղբաժինների պետերին նշանակում և աշխատանքից հանում ե ՀամԿ(բ)Կ Կենտկոմը՝ յերկրկոմների, մարզկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարների առաջադրանքով:

### Բ. Յերկրային (մարզային) հողվարչությունների և ազգային հանրապետությունների Հողժողկոմատների ՄՏԿ քաղսեկտորները

Յերկրային (մարզային) հողային վարչություններում և ազգային հանրապետությունների հողժողկոմատներում կազմակերպվում են ՄՏԿ-ների քաղսեկտորներ հետևյալ կազմով՝ քաղսեկտորի պետ, յերկու տեղակալ՝ ընդհանուր կուսակցական աշխատանքի գծով, մի ոգնական՝ կոմյերիտական աշխատանքի գծով և ճյուղային — յերկրային տրակտորկենտրոնների պատասխանատու հրահանգիչները:

Յերկրային (մարզային, հանրապետական) ՄՏԿ-ի քաղսեկտորի պետը հանդիսանում ե յերկրային (մարզային) հողային վարչության վարիչի տեղակալը: Յերկրային (մարզային) հողային վարչության ՄՏԿ-ի քաղսեկտորի պետն անմիջականորեն յենթարկվում ե Միության Հողժողկոմատի ՄՏԿ-ի Քաղվարչությանը, իր աշխատանքը համաձայնեցնում ե համապատասխան յերկրային ու մարզային կոմիտեների ու ազգային կոմկուսների կենտկոմների հետ, պարբերաբար հաշիվ ե տալիս նրանց իր աշխատանքի մասին և մտնում ե այդ կոմիտեների կազմի մեջ:

Յերկրային ու մարզային հողվարչությունների ու ազգային հանրապետությունների հողժողկոմատների ՄՏԿ-ի քաղսեկտորների պետերին հաստատում և աշխատանքից հանում ե ՀամԿ(բ)Կ Կենտկոմը՝ յերկրկոմների, մարզկոմների ու ազգային կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարների առաջադրանքով:

### Գ. Միության Հողժողկոմատի ՄՏԿ քաղվարչությունը

ԽՍՀՄ-ի Հողժողկոմատում կազմակերպվում ե ՄՏԿ քաղվարչության հետևյալ կազմով՝ պետ, նրա յերկու տեղակալը՝ ընդ-

հանուր կուսակցական աշխատանքի գծով, մի օգնական՝ կոմյերիտական աշխատանքի գծով և մարզային ճյուղային տրակտորկենտրոնների պատասխանատու հրահանգիչները։

Միության Հողժողկոմատի ՄՏԿ քաղվարչության պետը հանդիսանում է Միության հողժողկոմի տեղակալը և յենթարկվում է ինչպես ժողկոմին, այնպես էլ անմիջապես ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին։ Միության Հողժողկոմատի ՄՏԿ քաղվարչությունն իրականացնում է ՄՏԿ-ների կուսակցական, կոմյերիտական և քաղաքական մասսայական աշխատանքի ղեկավարությունն իր տեղական օրգանների միջոցով, այն է՝ յերկրային (մարզային) հողային վարչությունների և ազգային հանրապետությունների հողժողկոմատների ՄՏԿ քաղսեկտորների միջոցով։

Միության Հողժողկոմատի ՄՏԿ քաղվարչության պետին նշանակում և աշխատանքից հանում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմը։

## IV. ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Խորհտնտեսությունների քաղբաժինները

Խորհտնտեսությունների քաղբաժինները կազմակերպվում են յուրաքանչյուր խորհտնտեսության մեջ և բաղկացած են պետից, նրա յերկու օգնականից՝ ընդհանուր կուսակցական աշխատանքների գծով ու մի օգնականից՝ կոմյերիտական աշխատանքի գծով։

Խորհտնտեսության քաղբաժնի պետը միաժամանակ հանդիսանում է խորհտնտեսության դիրեկտորի տեղակալը՝ քաղաշխատանքի գծով։

Խորհտնտեսության քաղբաժնի պետն իրականացնում է կուսակցական ու կոմյերիտական աշխատանքի լիակատար ղեկավարությունը և ամբողջովին պատասխանատվություն է կրում խորհտնտեսության կուսակցական-քաղաքական աշխատանքի համար, համաձայնեցնելով իր աշխատանքի պլանը խորհտնտեսության դիրեկտորի հետ։

Քաղբաժնի պետն օգնում է խորհտնտեսության դիրեկտորին նրա ամբողջ աշխատանքում, ընդմին վոչ մի դեպքում չփոխարինելով նրան, խորհտնտեսության դիրեկտորի հետ պատասխանատվություն է կրում խորհտնտեսության արտադրական պլանների և կուսակցության ու կառավարության դիրեկտիվների կատարման



համար, պետությանն արտադրանքը հանձնելու ծրագրի ճշտիվ կատարման համար։

Խորհտնտեսությունների քաղբաժիններն ակտիվ կերպով մասնակցում են խորհտնտեսությունների կադրերի ընտրությանը, վորոնց թվում նաև խորհտնտեսության վարչական-տնտեսական աշխատողների ընտրությանը։

Խորհտնտեսության քաղբաժնի պետն անմիջականորեն յենթարկվում է Խորհտնտեսությունների Ժողկոմատի քաղվարչությանը և իր աշխատանքի համար պատասխանատու չե մարզկոմի, յերկրկոմի կամ ազգային կոմկուսների կենտկոմների քարտուղարության առաջ։

Խորհտնտեսության քաղբաժնի պետին նշանակում և աշխատանքից հանում է ՀամԿ(բ)Կ Կ Կոմիտեն՝ յերկրկոմների, մարզկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարների առաջադրանքով։

### Բ. Խորհտնտեսությունների քաղվարչությունը Միության Խորհտնտեսությունների ժողկոմատում

ԽՍՀՄ-ի Խորհտնտեսությունների ժողկոմատում կազմակերպվում է խորհտնտեսությունների քաղվարչություն հետևյալ կազմով՝ պետ, նրա յերկու տեղակալը և մի օգնական՝ կոմյերիտական աշխատանքի գծով։

Խորհտնտեսությունների ժողկոմատի խորհտնտեսական քաղվարչության պետը հանդիսանում է ժողկոմի տեղակալը և յենթարկվում է ինչպես ժողկոմին, այնպես էլ անմիջականորեն ՀամԿ(բ)Կ Կենտկոմին։

Հացահատիկային ու անասնաբուծական խորհտնտեսությունների ժողկոմատի խորհտնտեսական քաղվարչությունն իրականացնում է խորհտնտեսությունների կուսակցական, կոմյերիտական և քաղաքական-մասսայական աշխատանքի ղեկավարությունը։

Խորհտնտեսությունների ժողկոմատի խորհտնտեսական քաղվարչության պետին նշանակում և աշխատանքից հանում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմը։

3

# ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ (Բ) Կ ԿԿ-Ի 1932 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Կուսակցության ԿԿ-ն բոլոր կուսակցական կազմակերպություններին մատնացույց է անում, վոր կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման խնդիրը ներկայումս հանդիսանում է ամենից առաջ կոլտնտեսությունների արտելային ձևի զարգացման ու ամրացման խնդիրը: Ընդ վորում ԿԿ-ն ելնում է նրանից, վոր կոլտնտեսությունների արտելային ձևից կոմունային անցնելն արհեստականորեն արագացնելու փորձերը կոլտնտեսությունների զարգացման ներկա ստադիայում լուրջ վտանգ են հանդիսանում: Դեռևս բավարար չափով չծավալված գյուղատնտեսական արտելի ձևի վրայով թռչելու այս վտանգի դեմ ԿԿ-ն նախազգուշացնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին:*

*Գարնանացանի կամպանիայի նախապատրաստման և բերքատվության բարձրացման համար պայքարելու առնչությամբ ԿԿ-ն առանձնապես ընդգծում է հետևյալ հերթական խնդիրները կոլտնտեսությունների արտելային ձևի կազմակերպական-տնտեսական ամրացման բնագավառում, արտելային ձև, վորը տվյալ ստադիայում տիրապետող է հանդիսանում:*

*1. Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևը պետք է դառնա բրիգադը: Լավագույն գյուղատնտեսական արտելների փորձին համապատասխան՝ ԿԿ-ն նպատակահարմար է համարում կոլտնտեսություններում կազմակերպել կոլտնտեսականների մշտական կազմով բրիգադներ, այն հաշվով, վոր, իբրև կանոն, այդ բրիգադները կատարեն բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքներն ամբողջ տարվա ընթացքում և վորոշակի հողամասերում:*

*Կոլտնտեսությունն այդ բրիգադներին նրանց աշխատանքի ժամանակ տալիս է անհրաժեշտ մեքենաները, ինվենտարը և բանող*



*անասունները, վորոնց վիճակի համար ամբողջապես պատասխանատու յե բրիգադը:*

*Կոլտնտեսականների աշխորերի գնահատումը պետք է բարձրանա կամ նվազի՝ նայած բրիգադի աշխատանքի հաջողության:*

*Այդ բրիգադների ստեղծումը, սակայն, չպետք է անհնար դարձնի բրիգադներին հողամասեր ամրացնելը (նայած տեղական պայմաններին, կոլտնտեսության մեծությանը և նրա կազմակերպվածությանը) վոչ թե ամբողջ գյուղատնտեսական սեզոնի համար, այլ գյուղատնտեսական աշխատանքների լոկ առանձին շրջանի համար (հերկ, բերքահավաք):*

*Բրիգադիրների ընտրությունը, նրանց կազմի հոսունության վերացումը, տնտեսական և քաղաքական վորակավորման բարձրության գործում բրիգադիրներին իրական ոգնություն ցույց տալը պետք է դառնա կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրը:*

*2. Լայն տարածում պետք է ունենա անցյալ տարի լավագույն կոլտնտեսություններում արդեն կիրառված այն պրակտիկան, յերբ բրիգադիրների աշխատանքը վարձատրում են համապատասխան բրիգադի աշխատանքի վերջնական արդյունքներին:*

*Բրիգադիրի պատասխանատվությունը բարձրացնելուն, կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման գործում նրան մի շարք ֆունկցիաներ հանձնելուն զուգընթաց պետք է կրճատել կոլտնտեսության ընդհանուր վարչական ծախքերը, վորոնք մի շարք դեպքերում անթույլատրելի չափով ուռցված են:*

*3. Գործավարձի արմատացման, յուրաքանչյուր կոլտնտեսականի կենցաղի բարելավման, կատարված աշխատանքի քանակի և վորակի համեմատ կոլտնտեսականի աշխատանքն աշխորերով գնահատելու մասին խորհուրդների 6-րդ համագումարի ընդունած վորոշումների գործնական իրականացումը շարունակում է մնալ իբրև կարևորագույն խնդիր:*

*Միաժամանակ ԿԿ-ն նախազգուշացնում է գործավարձի ձևերը ծայր աստիճան բարդացնելուց, պրոգրեսիվ գործավարձ մտցնելուց, գործավարձի անհատական ձևերով տարվելուց՝ այնտեղ, վորտեղ այդպիսին չեն առաջադրում արտադրության պայմանները (որինակ՝ հերկի և կալսման ժամանակ), կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը դրամական աշխատավարձի փոխադրելու փորձերից, կոլտնտեսությունների վարչությունների աշխատանքը կուսակցական և խորհրդային կազմակերպություն-*

ների կողմից մերկ վարչարարությամբ փոխարինելուց, գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ ընդունված՝ զանազան ֆոնդերի հատկացումների չափերն ավելացնելուց:

4. Լայն տարածում պետք է ունենա լավագույն անասնապահական կոլտնտեսական ֆերմաների փորձով ստուգված այն պրակտիկան, յերբ բրիգադում աշխատող կոլտնտեսականներն սպասարկում են կենդանիների վորոշ խմբի, այն հաշվով, վոր անասնապահական բրիգադը և նրա մեջ մտնող կոլտնտեսականները վարձատրվեն նրանց կատարած աշխատանքի արդյունքների համեմատ (կթված կաթի քանակը, ձագերի քաշի ավելացումը, ձագերի ավելացումը և այլն):

5. ԿԿ-ն կուսակցական և կուլտուրական կազմակերպությունների կարևորագույն քաղաքական խնդիրն է համարում հարվածային կոլտնտեսականներից, սոցմրցման մասնակիցներից, բրիգադիրներից և այլն կոլտնտեսական ակտիվ առաջքաշելու և դաստիարակելու աշխատանքը: Կոլտնտեսական ակտիվի վրա պետք է հենվեն տեղական կազմակերպությունները կարևորագույն տնտեսական միջոցառումներն իրագործելիս, այն է՝ բերքի համար, հացամթերումների պլանի կատարման և այլ միջոցառումների համար պայքարելիս, ինչպես նաև կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման գործում:

6. Կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման, կոլտնտեսական ակտիվի ստեղծման և բերքատվության բարձրացման ամբողջ աշխատանքում առանձնապես մեծ է մեքենա-տրակտորային կայանների դերն ու պատասխանատվությունը:

7. Այս առնչությամբ ԿԿ-ն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին ուժեղացնել ամենօրյա օգնությունը մեքենա-տրակտորային կայաններին, հատկապես կադրերի ամրացման գործում, և ուժեղացնել ՄՏԿ-ների վողջ տնտեսական աշխատանքի ղեկավարությունը:

ՀամԿ(բ)Կ ԿԿ



4

# ԼԵՆԻՆԻՍՏՈՐԵՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԵՆՔ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱԿՏԻՎԻՆ*)

Կոլտնտեսական ակտիվ ստեղծելն ու դաստիարակելը կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման կենտրոնական հարցերից մեկն է: Այս բնագավառում մենք հնարավորությունների անսպառ աղբյուր ունենք: Յեթե մենք հերկենք մարդկային նյութը կոլտնտեսություններում, այնտեղ բաղեղի պես կաճի ակտիվը, վորին թանկ ու մոտիկ են սոցիալիստական հողագործության շահերը:

Լենինը դեռ 1918 թվի սկզբին գրում եր. «Կազմակերպական տաղանդները «ժողովրդի» մեջ, այսինքն՝ բանվորների և ուրիշի աշխատանքը չշահագործող գյուղացիների մեջ, ահագին են. Նրանց հազարներով ճզմում, կործանում, դուրս եր նետում կապիտալը. Նրանց մենք դեռ չենք կարողանում գտնել, քաջալերել, վոտքի կանգնեցնել, առաջ մղել: Բայց մենք այդ կսովորենք, յեթե ձեռնամուխ լինենք սովորելու ամբողջ հեղափոխական խանդավառությամբ, առանց վորի հաղթական հեղափոխություններ չեն լինում»:

Մեր հեղափոխության ամբողջ պատմությունն իր յուրաքանչյուր ետապում, բոլոր գործերում, ամեն մի բնագավառում հաստատում է Լենինի խոսքերը: Ինչքա՞ն տաղանդներ և կազմակերպիչներ է առաջ քաշել Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորներից ու աշխատավոր գյուղացիներից:

Առավել ևս հեղափոխական խանդավառությունը հարկավոր է կոլտնտեսականների մեջ կազմակերպական տաղանդների դաստիարակման համար այժմ, յերբ մեր աչքի առաջ կատարվել է չքավորի ու միջակի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող անցումը սոցիալիստական հողագործության ուղին և իր ամբողջ լայնությամբ դրված է կոլտնտեսությունների

*) «Պրավդա»-յի 1932 թ. օգոստոսի 6-ի առաջնորդողը:

ամրացման խնդիրը։ Ցեվ այժմ այդ ավելի հեշտ ե կատարել, վորովհետև հեղափոխության բոլոր նախորդ եռամյակները, մանավանդ կոլտնտեսային շինարարության վերջին յերեք տարիները բավական մեծ քանակությամբ ակտիվիստներ են կուտակել գյուղում։

Ընկ. Ստալինը կուսակցության 16-րդ համագումարում ասում եր, վոր «կոլտնտեսային շարժման ամենաուշագրավ նվաճումներից մեկն այն ե, վոր նա արդեն կոլտնտեսական գործի հազարավոր կազմակերպիչներ և տասնյակ հազարավոր ագիտատորներ ե առաջքաշել հենց գյուղացիներից։ Հիմա արդեն վոչ միայն մենք, վորակյալ բոլշևիկներս, այլ իրենք գյուղացիները կոլտնտեսություններից, կոլտնտեսական գործի տասնյակ հազարավոր գյուղացի-կազմակերպիչներն ու ագիտատորներն առաջ են տանելու կոլեկտիվացման դրոշը։ Իսկ գյուղացի ագիտատորները կոլտնտեսական շարժման հիանալի ագիտատորներ են հանդիսանում, վորովհետև նրանք գտնում են գյուղացիական մնացած մասսայի համար հասկանալի և ընդունելի այնպիսի փաստարկումներ կոլտնտեսությունների վգտին, վորոնց մասին մենք, վորակյալ բոլշևիկներս, յերազել անգամ չենք կարող»։

Ցեվ ահա այժմ հարցի առանցքն այն ե, վոր վորակյալ բոլշևիկները, կուսակցական աշխատողներն ոգնեն գյուղացի ագիտատորներին, դաստիարակեն նրանց, ոգնեն ըմբռնելու կուսակցության քաղաքականությունը, ոգնեն ձեռք բերելու կազմակերպական ունակություններ։ «Կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման հերթական միջոցառումների մասին» 1932 թ. փետրվարի 4-ին կուսակցության ԿԿ-ի ընդունած վորոշման մեջ ես լիակատար հաստատականությամբ և հստակությամբ ասված ե, թե «ԿԿ-ն կուսակցական և կոլտնտեսական կազմակերպությունների կարևորագույն քաղաքական խնդիրն ե համարում հարվածային կոլտնտեսականներից, սոցմրցման մասնակիցներից, բրիգադիրներից և մյուսներից կոլտնտեսական ակտիվ առաջքաշելու և դաստիարակելու աշխատանքը»։

Կատարվո՞ւմ ե արդյոք այս վորոշումը։ Վոչ, տակավին չի կատարվում։ Անշուշտ, այս բնագավառում տեղաշարժ կա, տեղ-տեղ նույնիսկ կան հիանալի որինակներ, թե ի՛նչպես պետք ե կոլտնտեսական ակտիվ դաստիարակել։ Բայց ընդհանուր առմամբ պետք ե ասել, վոր կուսակցական ու կոլտնտեսական կազմակերպությունները և հատկապես շրջանային կուսակցական կոմիտեն-



րը դեռ բավականաչափ պարզ չեն պատկերացնում, թե ինչպիսի մեծ, մանրակրկիտ և ստեղծարար աշխատանք ե հարկավոր իրոք կոլտնտեսական իսկական ակտիվ դաստիարակելու համար։ Դեռ ամենևին պարզ պատկերացում չկա այն մասին, վոր վողջ կուսակցական աշխատանքը գյուղում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, գյուղսպառկոոպում պետք ե վերակառուցել նոր ձևով։

Շրջաններում դեռ շատ և շատ հաճախ չեն ճանաչում կոլտնտեսական ակտիվիստներին։ Այստեղ դեռևս իշխում ե դիմազրկությունը։ Նախքան կոլտնտեսական շրջանը գյուղերում հավաքում եյին չքավորական խմբերին, ճանաչում եյին նրանցից ամենից ավելի ակտիվներին, ճանաչում եյին լավագույն միջակներին։ Իսկ այժմ, յերբ չքավորները և միջակները կոլտնտեսություն են մտել, շատ տեղերում մարդկանց կորցրել են աչքից, նոր մարդկանց, նոր կազմակերպիչներին, կոլտնտեսությունների համար պայքարողներին չեն ճանաչում հարկ յեղածին պես։ Բավական դյուրհավատաբար դատում են, թե խնդիրը լուծված ե, չքավորը և միջակը կոլտնտեսություն են մտել, ուրեմն նրանք քաղաքական դաստիարակության կարիք չունեն։ Այնինչ հենց կոլտնտեսությունում ե առաջադրված ամենալուրջ, ամենաբարդ դաստիարակչական աշխատանքը։

Իսկ ի՛նչպես կարելի յե այդպիսի պայմաններում ակտիվ դաստիարակել։

Ի՞նչպես եր Լենինը սովորեցնում աշխատավորներից կազմակերպիչներ դաստիարակել։ «Մենք կընթանանք մեր ճանապարհով, աշխատելով ինչքան կարելի յե զգուշությամբ և համբերատարությամբ փորձել ու ճանաչել իսկական կազմակերպիչներին, լըջախոհ և գործնական ըմբռնողության տեր մարդկանց, մարդկանց, վորոնք սոցիալիզմին նվիրված լինելը միացնում են խորհրդային կազմակերպության շրջանակներում մեծ քանակությամբ մարդկանց ամուր ու համերաշխ աշխատանքն առանց աղմուկի (և հակառակ աղմուկին ու շփոթին) գլուխ բերելու կարողության հետ։ Միայն այդպիսի մարդկանց ե, վոր տասն անգամ ստուգման յենթարկելուց հետո, պետք ե, ամենապարզ խընդիրներից դեպի ամենաբարդ խնդիրները մղելով, առաջքաշել ժողովրդական աշխատանքի ղեկավարների, կառավարման ղեկավարների պատասխանատու պոստերը»։

Իսկ կուսակցական կազմակերպությունները դեռ հաճախ ձևականորեն են մոտենում այդ հարցին: Մի յերկու–յերեք վերացական զրույցներ, մի յերկու զեկուցում են անցկացնում (ի դեպ, խոսածի կեսը չի հասնում ունկնդիրների գիտակցությանը) և գտնում են, թե գործն արված է, թե ակտիվ կա: Ո՛չ, դա անգամ խնդրի լուծմանը մոտենալ չէ: Այդ կերպ ակտիվ չեն ստեղծի:

Հարկավոր է ճանաչել մարդկանց, նրանց հետ մշտապես կապված լինել և ամենաբազմազան մեթոդներով, օգտագործելով կոլտնտեսությունների տնտեսական գործունեության ամենից ավելի ցայտուն փաստերը, մշտապես ազդել և վերադաստիարակել լավագույն կոլտնտեսականներին: Կուսակցության շրջկոմների քարտուղարներն ու աշխատողները, շրջգործկոմների նախագահներն ու աշխատողները պարտավոր են անձամբ ճանաչել իրենց շրջանի կոլտնտեսությունների բրիգադիրներին ու լավագույն մարդկանց: Հաճախակի կոլտնտեսություն գնալ, հավաքել կոլտնտեսականներին, լինել նրանց տներում, թղթակցել նրանց հետ, իրազեկ լինել նրանց անձնական կյանքի գործերին, նրանց հետ միասին քննարկել նրանց կոլտնտեսության ամենից ավելի բարդ հարցերը (աշխատանքի կազմակերպում, յեկամուտների բաշխում և այլն), հանձնարարել, թե ինչ կարդալ, անձամբ հավաքել ակտիվին և նրա հետ միասին ընթերցել Լենինի, Ստալինի այս կամ այն հոդվածը, կոլտնտեսականի գիտակցության մեջ արմատացնել սոցիալիզմի և սոցիալիստական շինարարության նշանակությունը, բացատրել Խորհրդային Միության միջազգային դրությունը, մարդկանց բարձրացնել հասարակական շահերն ըմբռնելու մակարդակին, վորպեսզի կոլտնտեսականը հարվածային լինի վոչ միայն ցանքի ու բերքահավաքի ժամանակ, այլև հացամթերումների պլանը կատարելիս. վերադաստիարակել, գիտակցությունից դուրս մղել մանր–բուրժուական տրամադրությունները, գիրքերով, փաստարկումներով զինել գյուղացի ագիտատորներին, վորոնց մասին խոսել է ընկ. Ստալինը, վորովհետև գյուղացի ագիտատորի խոսքերն իրենց պարզությամբ, պատկերավորությամբ շատ հաճախ ավելի լավ և ավելի շուտ են հասնում կոլտնտեսական մասսայի գիտակցությանը. սրանց խոսել կոլտնտեսականների հետ:

Անպայմա՛ն սրանց խոսել:

Ահա թե, որինակ, ինչ է գրում ընկ. Սուվորան՝ Պավլովսկի



շրջանի (Հյուս. Կովկաս) «Զա միր ի տրուդ» կոլտնտեսության այդ լավ բրիգադիրը. «Վորպեսզի աշխատանքը լավ գնա, հարկավոր է հաճախակի խոսել կոլտնտեսականների հետ: Արտադրական խորհրդակցությունները հաջող աշխատանքի անհրաժեշտ պայմաններ են»: Մեզ մոտ տեղ–տեղ մոռացել են գյուղացու հետ խոսելու յեղանակը,—կամ հրամայում են, կամ բուքսիրի յեն յենում նրա մանր–բուրժուական տրամադրություններին: Վո՛չ, հարկավոր է ոգնել խելացի կերպով, հասկանալի լեզվով: Գիտակցությունը հասնող փաստարկումով ջնջել մանր–բուրժուական տարերքի ազդեցությունը: Կոլտնտեսական ակտիվի դաստիարակման ամբողջ աշխատանքը, ամբողջ ագիտացիան պետք է կապել կոլտնտեսության տնտեսական կյանքի հետ: Հարկավոր է կոլտնտեսականի մեջ դաստիարակել իր կոլտնտեսության տիրոջ զգացմունքը, նրան այդ ապացուցել գործով, նրա աշխատանքի և կոլտնտեսության տնտեսական գործունեության յուրաքանչյուր ոդակում: Իսկ կոլտնտեսության աշխատանքն այնպես կառուցել, վորպեսզի նրա յուրաքանչյուր հաջողությունն ու նվաճումը կոլտնտեսականն զգա իր անձնական բյուջեի, իր անձնական բարեկեցության մեջ: Չպետք է խնայել ժամանակը կոլտնտեսականների, կոլտնտեսության նախագահի, վարչության անդամների, բրիգադիրների, կոլտնտեսուհիների, կոլտնտեսական յերիտասարդության հետ սրանց խոսելու համար: «Միտինգ անելը,—գրում է Լենինը,—հենց այդ է աշխատավորների իսկական դեմոկրատիզմը, նրանց ուղղվելը, նոր կյանքի համար արթնանալը, նրանց առաջին քայլերն այն ասպարեզում, վորը նրանք իրենք են մաքրել զեռուններից (շահագործողներից, կապիտալիստներից, կալվածատերերից, իմպերիալիստներից), և վորը նրանք իրենք են կամենում սովորել հարդարել իրենց ձևով, իրենց համար, իրենց, «խորհրդային» իշխանության և վոչ թե խորթ, վոչ թե կալվածատիրական, վոչ թե բուրժուական իշխանության հիմունքներով»: Այդ վերաբերում է նաև կոլտնտեսություններին, վորտեղ գործի նորությունը, կոլտնտեսությունների շուրջն ընթացող դասակարգային պայքարը գյուղացիների մոտ ծնունդ են տալիս ահագին նոր հարցերի, տարակուսանքների և այլն:

Այս բնագավառում մեծ խնդիրներ են ծառացած նաև կոմյերիտական կազմակերպությունների առաջ: Պետք է ոգնել կոմյերիտմիության գյուղական կազմակերպություններին, դաստիա-

րակել նրանց, ղեկավարել գործնական աշխատանքում, բարձրացնել նրանց խանդավառությունը, վորպեսզի նրանք դառնան գյուղական յերիտասարդության մասսաների իսկական կազմակերպիչները: Կոմյերիտական կազմակերպությունները գյուղում—դա հսկայական ուժ է, վորը մինչև այժմ շատ և շատ շրջանային ու մարզային կուսակցական կոմիտեներ չեն ոգտագործել կոլտնտեսությունների ամրացման համար:

Գիտենալ, թե ի՛նչպես և վո՛րտեղ է կոլտնտեսական յերիտասարդությունը ժամանակ անցկացնում աշխատանքից հետո, ինչո՛վ է նա հետաքրքրվում, ինչո՛վ է շնչում, վողջ կուլտուրական և արտադրական աշխատանքը համակել քաղաքական բովանդակությամբ և դրա վրա դաստիարակել սոցիալիզմի մարտիկներին՝ կոմյերիտական և կուսակցական կոլտնտեսականներին,—ահա կոլտնտեսական ակտիվի դաստիարակության մասին կուսակցության հանած վորոշումների կատարման խնդիրն ու ուղին:

Կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններն ելի ու ելի պետք է ըմբռնեն, վոր առանց կոլտնտեսական ակտիվի չի կարելի կազմակերպորեն և տնտեսապես ամրացնել կոլտնտեսությունները: Առանց ակտիվի՝ բոլոր խոսակցությունները կորուստների դեմ պայքարելու, բերքահավաքը ժամանակին կատարելու, դիզելու, կոլտնտեսության յեկամտաբերությունն ընդհանրապես բարձրացնելու, կոլտնտեսական առևտուրը ծավալելու, սպեկուլյանտի և կուլակային ագիտացիայի դեմ պայքարելու մասին—դատարկ խոսքեր են: Առանց ամուր, համախմբված, գիտակից կոլտնտեսական ակտիվի՝ կուլակային ագիտացիան և քանդողական աշխատանքը բոլշևիկյան հակահարվածի չեն հանդիպի:

Կոլտնտեսական ակտիվ ստեղծելու համար մղվող պայքարում տեղական գյուղական և կոլտնտեսական, կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները հսկայական դեր են խաղում: Բնական է, վոր կուսակցական աշխատանքի ուշադրության կենտրոնակետը շրջանում, և վոչ միայն շրջանում, պետք է լինի կոլտնտեսական և գյուղական բջիջը: Այստե՛ղ պետք է ուղարկել պրոպագանդիստներին, դասախոսներին, գրականությունը:

Վորակյալ կուսաշխատողները պետք է գյուղ գնան, աշխատեն այնտեղ, սովորեն այն նորը, վոր կա սոցիալիստական հողագործության մեջ, սովորեցնեն և դաստիարակեն կուսակցական և կոլտնտեսական ակտիվին լենինյան վոգով, բոլշևիզմի վոգով:

Պետք է բարձրացնել գյուղական կուսակցական կազմակերպությունների նշանակությունն ու կշիռը: Չի կարելի կարծել, թե հնարավոր է կոլտնտեսական ակտիվ ստեղծել առանց տեղական կուսակցական և կոմյերիտական ուժերի ճիշտ դասավորման: Շատ հաճախ է լինում, վոր կոմունիստ կոլտնտեսականները կտրված են կոլտնտեսական արտադրությունից: 1932 թ. մայիսի 15-ի այն վորոշման կատարումը, վորտեղ «ԿԿ-ն առաջարկում է յերկրկոմներին, մարզկոմներին, շրջկոմներին և կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների բջիջներին՝ թույլ չտալ արտադրության մեջ գրավված կուսակցականների, կոմյերիտականների և անկուսակցականների աննպատակահարմար տեղափոխումները վոչ-արտադրական աշխատանքների, ընդհակառակը, ձգտել նրանց ամեն կերպ արտադրության մեջ պահել և ճիշտ դասավորել կարևորագույն արտադրական բնագավառներում»,—դա կոլտնտեսական ակտիվ ստեղծելու կարևորագույն նախադրյալներից մեկն է:

**Կոմունիստնե՛ր, կոմյերիտականնե՛ր, կուսակցական աշխատողնե՛ր, սովորեցեք Լենինի և Ստալինի լեզվով խոսել (ըստ էության և ըստ ձևի) կոլտնտեսական մասսաների հետ, աշխատավոր գյուղացիների հետ:**

**Լենինյաորեն դաստիարակեցեք կոլտնտեսական ակտիվին:**

---

5

# ՀԱՄՈՒՆԱՑՆԵԼ ՅԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԸ*)

Ջախջախված, բայց դեռ վերջնականապես չվոչնչացված կուլակության մնացորդները շարունակում են կատաղի դիմադրություն ցույց տալ սոցիալիստական հարձակմանը, հակահեղափոխական սաբոտաժ կազմակերպելով պրոլետարական պետության միջոցառումների հանդեպ: Կուլակներին աջակցողների, գրպանում կուսատոմս ունեցող՝ կուսակցության թշնամիների ոգնությամբ, ոպորտունիստների ոգնությամբ կուլակության մնացորդները կոլտնտեսություն են խցկվում և շահագործելով կոլտնտեսականների հետամնաց խավերի դեռևս չվերացված մասնավոր սեփականատիրական բնազդները, հենվելով գուփողական տարրերի վրա, փորձում են ներսից պայթեցնել կոլտնտեսությունները:

Թե ինչպես է կուլակությունն ոգտագործում առանձին կուսկազմակերպությունների դասակարգային զգոնության բթացումն այն քաղաքական հակահեղափոխական աշխատանքի համար, վոր կատարում է նա մթերումները վիժեցնելու և պետության հանդեպ վերցրած պարտավորությունները տապալելու նպատակով, դրան որինակ կարող են ծառայել Անդրկովկասում սև տախտակի հանված շրջանները: Նրանց մեջ հիմնական տեղը գրավում է Աղդաշի շրջանը, վորտեղ տասը բջիջ զտելու հետևանքով կուսակցությունից դուրս շպրտվեցին 47 հոգի 120 հոգուց: Կուսակցությունից վտարվեցին քայքայված մարդիկ, վերասերվածները, յերկերեսանիները, դասակարգային թշնամու հետ համաձայն ուղղակի դավաճանները:

Ցեյն կուլակությունն այդ շրջաններում վորոշ հաջողություններ ունեցավ բամբակի հավաքման կամպանիան վիժեցնելու գործում, այս շնորհիվ այն բանի, վոր այդ շրջանների կուսկազմակերպությունները կորցրել էին դասակարգային մարտունակությունը, հանցագործ անտարբերություն էին ցուցաբերել այդպիսի դասակարգայնորեն խորթ և քայքայված մարդկանց, կուլակին ուղղակի աջակցություն ցույց տվող այդ թունդ ոպորտունիստների՝ կուսակցության մեջ լինելուն:

Աղդաշի դասից պետք է անել անհրաժեշտ յեզրակացություններ: Պետք է հստակորեն պարզաբանել յուրաքանչյուր կուսկազմակերպության, յուրաքանչյուր առանձին կոմունիստի, վոր գյուղում դասակարգային պայքարի ներկա բարդ պայմաններում պահանջվում է բոլշևիկյան ամուր միաձուլություն և յերկաթյա կարգապահություն, քաղաքական խնդիրների հստակ ըմբռնում, բացառիկ ուժեղ հեղափոխական աչալրջություն դասակարգային թշնամու և նրա գործակալների բոլոր վոտնձգությունների նկատմամբ, բոլոր դիրեկտիվների հստակ ոպերատիվ կատարում:

Դասակարգային թշնամին քնած չէ: Թափթփվածությունը, անճարակությունը, անողնաշար-լիբերալ և հաշտվողական վերաբերմունքը պրոլետարական դիկտատուրայի թշնամիների, սոցիալիստական շինարարության կազմալուծիչների, մանր-բուրժուական սանձարձակության և անփութության կրողների հանդեպ— պետք է վճռականորեն վտարել բոլոր կազմակերպությունների աշխատանքի պրակտիկայից:

Վողջ գործնական աշխատանքը բարձրացնել ակտուալ քաղաքական խնդիրների մակարդակին, նրան տալ մարտական ոպերատիվ բնույթ— այդպես է խնդիրը:

Բայց աշխատանքը մարտականորեն կատարել, այդ չի նշանակում հրամայել և վարչարարություն անել: Գործնական աշխատանքի յուրաքանչյուր քայլը պետք է իրագործել մասսայական-բացատրական և դաստիարակչական աշխատանքի ծավալման հիման վրա, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների լայնագույն ուժերը կազմակերպելու և կուսակցության շուրջը համախմբելու հիման վրա:

Մասսաների աճող քաղաքական ակտիվությունը գլխավորելու համար հարկավոր է կուլակի դեմ մղվող պայքարում զարգացնել, դաստիարակել և կոփել կոլտնտեսական ակտիվին: Դրանում է ներկայումս մեր բոլոր գյուղական կուսկազմակերպությունների կարևորագույն քաղաքական խնդիրը:

Կուսակցությունը միշտ ամենամեծ ուշադրությունն է դարձրել և դարձնում է լայն անկուսակցական ակտիվի կազմակերպմանը: «Յեթե կոմունիստները փակվեյին իրենց պատյանի մեջ,

*) «Զարյա Վոստոկա»-յի 1933 թ. հունվարի 4-ի առաջնորդողը

պատնեշ քաշեյին իրենց և անկուսակցականների միջև, նրանք կը-կործանեյին ամբողջ գործը: Յեթե կոմունիստներին հաջողվել է փառքով պսակվել սոցիալիզմի համար մղած մարտերում, իսկ կո-մունիզմի թշնամիները ջախջախվել են, ապա դա, ի միջի այլոց, նրա համար, վոր կոմունիստները կարող են գործի լծել անկու-սակցական լավագույն մարդկանց, նրանք կարողացել են ուժ հա-վաքել անկուսակցականների լայն խավերից, նրանք կարողացել են իրենց կուսակցությունը շրջապատել անկուսակցական լայն ակ-տիվով» (Ստալին):

Տեղ-տեղ մինչև այժմ վեճեր կան այն մասին, թե ո՛վ պետք է կոլտնտեսական ակտիվ համարել: Հաճախ ակտիվի շարքն են դա-սում այնպիսի մարդկանց, վորոնք ամենևին զբաղված չեն կոլ-տնտեսական արտադրության մեջ, վոչինչով իրենց ցույց չեն տվել: Մարդիկ ակտիվիստ են համարվում միայն նրա համար, վոր նրանք վարչատնտեսական պաշտոններ են գրավում կոլտնտեսությունում (պահեստապետներ, տնտեսվարներ, հաշվետարներ):

Հաճախ կոլտնտեսական ակտիվի շարքն են դասվում նաև նրանք, վորոնք ամբողջ որերով վեր են ընկած կոլտնտեսության վարչությունում կամ գյուղխորհրդում և քիչ կարևորություն ունեցող հանձնարարություններ են կատարում:

Միևնույն ժամանակ արտադրության խիզախ հարվածային-ները, լավագույն բրիգադիրները, վորոնք կարողանում են ամե-նադժվարին պայմաններում ժամանակին կատարել այնպիսի պա-տասխանատու առաջադրություններ, վորոնցից կախված է հիմ-նական կամպանիաների հաջողությունը, բայց չեն կարողանում կամ քաշվում են ժողովներում յելույթ ունենալ,— այդպիսի մար-դիկ ակտիվի շարքը չեն դասվում: Շատ հաճախ ակտիվիստ չեն համարվում դաշտավարական բրիգադների հարվածայինները, լա-վագույն դարբինները, տրակտորներ և մյուս բարդ գյուղատնտե-սական մեքենաներ վարողները: Կան նաև այնպիսի դեպքեր, յերբ ակտիվը ստեղծվում է բյուրոկրատական ձևով, մեխանիկո-րեն «ակտիվիստ նշանակելու» ճանապարհով:

Մի քանի կոլտնտեսություններում ակտիվի շարքերն են խցկ-վում կուլակային տարրերը: Կոլտնտեսական ակտիվին խառնված կուլակն օգտագործելով ակտիվիստի իր դիրքը, կատարում է իր քանդողական հակահեղափոխական աշխատանքը:

Կուսակցության դիրեկտիվների ամենակոպիտ խեղաթյուրում են հանդիսանում այնպիսի փաստեր, յերբ մի քանի կուսակցական



բջիջներ ակտիվի շրջանակները սահմանափակում են լոկ նախկին [illegible] ու բատրակներով և գտնում են, վոր նախկին մի-ջակներին կոլտնտեսականների ակտիվի մեջ ներգրավելն անհնար է: Սակավ չեն նաև այնպիսի դեպքեր, յերբ փակում են ակտիվի մուտքը այնպիսի կոլտնտեսուհիների առաջ, վորոնք իրենց ցու-ցաբերել են իբրև լավագույն հարվածայիններ:

Ինքնահոսը, մեխանիկական մոտեցումը կոլտնտեսական ակ-տիվի ընտրության գործում— ոպորտունիզմի ամենավնասակար դրսևորումն է:

Կոլտնտեսական ակտիվիստ լինել չի կարող ծույլը, դատար-կապորտը, վորը վոչ թե ակտիվություն է ցուցաբերում արտա-դրության մեջ և պատասխանատու տնտեսական-քաղաքական խըն-դիրների կատարման համար պայքարելու գործում, այլ ժամանա-կը սպանում է ժողովներում յերկար-յերկար դատարկախոսելով:

Այդպիսի դատարկախոսները լոկ պատճառ են դառնում բարե-խղճորեն իրենց արտադրական պարտականությունները կատարող կոլտնտեսականների օրինական դժգոհության: Դժբախտաբար [illegible] քիչ չեն այդպիսի պատուհաս-ակտիվիստները մեր ա-ռանձին կոլտնտեսական բջիջների կոմունիստների և կոմյերիտա-կանների մեջ: Փոխանակ ավանգարդային դեր կատարելու կոլտն-տեսական արտադրության մեջ, այդ «ակտիվիստներից» շատերը պարծենում են իրենց կուսակցական դիրքով, համարձակվելով արհամարհաբար վերաբերվել անկուսակցական ազնիվ կոլտնտե-սականների հետ:

Մերկացնելով կոլտնտեսությունների և նրանց ակտիվի մեջ խցկված կուլակային տարրերին, նրանց հետ միասին մերկացնե-լով նաև բոլոր կեղծ ակտիվիստներին, կուսակցական կազմակեր-պությունները պետք է համառ աշխատանք կատարեն կոլտնտեսա-կան ակտիվ ստեղծելու և համալրելու ուղղությամբ՝ կոլտնտե-սական արտադրության հարվածայիններից՝ սոցմրցման մասնա-կիցներից, բրիգադիրներից, վորոնք իրենց աշխատանքով ապա-ցուցել են, վոր կարող են պայքարել կոլտնտեսությունների կազ-մակերպչական-տնտեսական ամրացման համար, բոլոր պետական պարտավորությունների կատարման համար, կարող են պայքարել կուլակների և կուլակային ազդեցությունների դեմ:

Կոլտնտեսական ակտիվիստ է հանդիսանում նա, ով վոչ մի-այն ինքն է լավ աշխատում արտադրության մեջ, այլև կարող է կազմակերպել նաև մյուսների աշխատանքը, պայքար է մղում

ծույլերի, աշխատապաշտպանությունը խախտողների, գողերի, հանրային սեփականությունը հափշտակողների դեմ։

Կոլտնտեսական ակտիվի կազմակերպումը պահանջում է քաղաքական մեծ հասունություն, պահանջում է ամենօրյա լուրջ աշխատանք։ Մեզ մոտ կան այնպիսի կուսբյուրոներ, վորոնք յուրաքանչյուր նոր քարտուղար լինելու դեպքում, յուրաքանչյուր նոր յեկած լիազորի համար կազմում են ակտիվի նոր ցուցակներ։ Ակտիվի այդպիսի կազմակերպումը գրոշ չարժե։ Կուսբյուրոները, կոլտնտեսությունների վարչությունները պետք է մոտիկից ճանաչեն յուրաքանչյուր ակտիվիստի, նրանով զբաղվեն մշտապես, և ոչ թե դեպքից դեպք։ Ակտիվի և նրա աշխատանքի հաշվառման լավ կազմակերպումը, ակտիվիստների ճիշտ դասավորումը կոլտնտեսության բրիգադներում, ֆերմաներում և տնտեսության ճյուղերում խոշոր նշանակություն ունեն։

Ակտիվի հետ կատարվող աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները, դա այնպիսի մի հարց է, վոր պահանջում է ուշադիր մոտեցում այն լուծելիս։ Մի քանի շրջանների աշխատողներն իրենց անգործունեությունն արդարացնում են նրանով, թե ակտիվի հետ կատարելիք աշխատանքի մասին «մանրամասն հրահանգներ չկան»։

Ակտիվի հետ կատարելիք աշխատանքի բովանդակությունը պարզ կերպով վորոշված է կուսակցության մի շարք դիրեկտիվների մեջ։ Կուսակցության ցուցումները հանգում են նրան, թե կոլտնտեսական ակտիվը պետք է լինի վճռական ուժը կոլտնտեսության մեջ, կուսբյուրոների գլխավոր հենարանը այն պայքարում, վոր մղում են նրանք կուլակության դեմ գյուղում բոլոր տնտեսական-քաղաքական կամպանիաներն անցկացնելիս։ Կոլտնտեսական ակտիվը պետք է սերտորեն կապվի կոլտնտեսական մասսայի հետ։ Ակտիվի հետ կատարելիք աշխատանքի համար հիմնական ողակը պետք է լինի կոլտնտեսական բրիգադը։ Ակտիվի ժողովը, արտադրական խորհրդակցությունը, ակտիվիստների մասնակցությունը կուսժողովներին և կոլտնտեսությունների վարչությունների նիստերին, նրանց ներգրավումը քաղաքական, ագրոտեխնիկական և հանրակրթական գիտելիքների բարձրացման խմբակների մեջ, անհատական զրույցները և այլն,— ահա ակտիվի հետ կատարվելիք աշխատանքի բազմազան կենդանի ձևերը, վորոնք յուրաքանչյուր գյուղում, յուրաքանչյուր կոլտնտեսությունում հարմարեցվելու և լրացվելու յեն տեղական բազմակողմանի փորձի հիման վրա։

Մենք ունենք կոլտնտեսական ակտիվիստների հերոսական և անձնուրաց աշխատանքի բազմաթիվ որինակներ հատկապես այն կոլտնտեսություններում, վորտեղ ակտիվի հետ սիստեմատիկ դաստիարակչական աշխատանք է կատարվում։ Հենց այդ կոլտնտեսություններումն էր, վոր կուլակային սաբոտաժի ժամանակներին ակտիվիստները նետվում եյին աշխատանքի ամենապատասխանատու ճակատամասերը, դասակարգային գիտակցության որինակներ ցույց տալիս, անձնական որինակով վարակելով շարքային կոլտնտեսականներին։

Ակտիվի հետ աշխատանքն այնպես պետք է կազմակերպել, վոր կոլտնտեսական ակտիվը տա աշխատանքի բարձր արտադրողականության որինակներ, արտադրության հանրայնացված միջոցների, պետության առաջ հանձն առած պարտավորությունների կատարման հանդեպ սոցիալիստական վերաբերմունքի որինակներ, կոլտնտեսային շինարարության գործին անձնուրացաբար նվիրված լինելու որինակներ։ Այդպիսի ակտիվը միշտ խոշոր հարգանք կվայելի և իսկական առաջատար ուժ ու հենարան կհանդիսանա կուսբյուրոների համար՝ գյուղում կատարվող ամբողջ աշխատանքում։

Կոլտնտեսական ակտիվին համախմբել կուսբյուրոների շուրջը և, հենվելով նրա վրա, կոլտնտեսականների ամբողջ մասսայի հեղափոխական ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկել պայքարելու ընդդեմ այն դիմադրության, վոր ցույց են տալիս կուլակները բամբակի հավաքման և գյուղատնտեսական մթերքների մթերման գործում, պայքարելու դարնանացանի որինակելի նախապատրաստման համար, բերքատվության բարձրացման, կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման համար— այդպիսին են ԱՍՖԽՀ-ի բոլոր գյուղական կուսկազմակերպությունների կարևորագույն խնդիրները։

Վ. ՏՈԴՐԵՍ

6

# ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎ *)

Փորձը ցույց տվեց, որ առանց կոլտնտեսական արտադրության ղեկավարմանը ակտիվ մասնակից դարձնելու կոլտնտեսականների այն առաջավոր մասին, որն ստուգված է կուլակի, ծույլի, գողի, կոլտնտեսական գույքը հափշտակողի դեմ մղված պայքարում,— կուսակցական կազմակերպությունների համար անհնար է հաջողությամբ լուծել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման, բերքատվության բարձրացման, կոլտնտեսական մասսաների սոցիալիստական վերադաստիարակման խնդիրները, անհնար է հացամթերումների հաջող կատարումը:

Ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում տված քաղաքական հաշվետվության մեջ առանձին հստակությամբ ընդգծեց անկուսակցական գյուղացիական ակտիվի դերը կոլտնտշարժման մեջ: Նա ասաց.

«Կոլտնտշարժման ամենաուշագրավ նվաճումներից մեկն այն է, որ նա արդեն կարողացել է կոլտնտեսական գործի հազարավոր կազմակերպիչներ և տասնյակ հազարավոր ագիտատորներ առաջ քաշել հենց իրենցից՝ գյուղացիներից: Այժմ արդեն ոչ թե միայն մենք, փորձված բոլշևիկներս, այլ իրենք՝ գյուղացիները կոլտնտեսություններից, տասնյակ հազարավոր գյուղացիներ—կոլտնտեսական գործի կազմակերպիչներ և ագիտատորներ—առաջ են տանելու կոլեկտիվացման դրոշը: Իսկ գյուղացի ագիտատորները կոլտնտեսական շարժման հիանալի ագիտատորներ են հանդիսանում, որովհետև նրանք գտնում են գյուղացիական հետամնաց մասսայի համար հասկանալի և ընդունելի այնպիսի փաստարկումներ կոլտնտեսությունների օգտին, որոնց մասին մենք, փորձված բոլշևիկներս, յերազել անգամ չենք կարող»:

XVI կուսհամագումարից հետո անցած ժամանակաշրջանը բնորոշվում է կոլտնտեսական մասսաների ակտիվության էլ ավելի բարձր վերելքով, սոցիալիստական մրցման և հարվածայնության լայն ծավալումով: Ակտիվի շարքերը լրացվել են կոլտնտեսական-ների նոր ջոկատներով, որոնք կոփվել են դասակարգային թշնա-

*) «Կուսշինարարություն» ժուռնալի 1933 թ. № 23-ից:



մու և կոլտնտեսություններում յեղած նրա գործակալների՝ ծույլի, գործալքի, գողի դեմ մղված կատաղի պայքարում: Ոչ թե խոսքով, այլ կոլտնտեսական բրիգադում, տրակտորի, գութանի վրա, դաշտում, հողամասում, ֆերմայում և բանջարանոցում կատարած գործով, հարվածային աշխատանքի, աշխատանքային հերոսության բարձր նմուշների անձնական ցուցադրումով և կոփվել այդ կոլտնտեսական ակտիվը:

Կոլտնտեսություններում մենք ներկայումս ունենք «ամուր, տաղանդավոր, հրաշալի կադրեր, որոնք պատրաստ են մեռնելու կոլեկտիվացման գործի համար» (Պոստիշև):

Գյուղում կուսակցական կազմակերպությունների վիթխարի աճման հետ միասին մենք ունենք նաև կոլտնտեսությունների ղեկավար կազմի զգալի ամրացում ի հաշիվ կուսակցության մեջ մտած կոլտնտեսականների:

Այսպես, Միջին Վոլգայի 40 կոլտնտեսությունների տվյալների համաձայն, կուսակցության անդամների տեսակարար կշիռը վարչության նախագահների մեջ կազմում է 85 տոկոս, վարչության անդամների մեջ՝ 45,5, ճյուղերի վարիչների մեջ՝ 28,9, բրիգադիրների մեջ՝ 24,2, արտադրական ակտիվի (հարվածայինների և այլն)՝ 21 տոկոս: Լենինգրադի մարզում 5000 բրիգադիրներից մոտ 7 տոկոսը կազմում են կուսակցության անդամներն ու թեկնածուները: Բաշկիրիայում, Կարամալկալի շրջանի 44 կոլտնտեսությունների տվյալների համաձայն, 176 բրիգադիրներից կուսակցականները և կոմյերիտականները 35 տոկոսն են կազմում:

Բաշկիրիան ընդհանրապես տիպիկական է մի շարք ազգային մարզերի համար: Այստեղ, ամենևին ոչ-լրիվ տվյալների համաձայն, հենց միայն ղեկավար կազմի ակտիվիստները (բրիգադիրներ, կոլտնտեսությունների վարչությունների անդամներ և նախագահներ), չհաշված արտադրական ակտիվը, հարվածայինները և մրցողները, հաշվվում է մոտ 42.000 հոգի: Իսկ նրանց մոտավոր ազգային-սոցիալական կազմը բնորոշվում է Վերին-Կիգեյան շրջանի տվյալներով, որտեղ 385 բրիգադիրներից բաշկիրները 48 տոկոսն են, թաթարները՝ 38, ռուսները՝ 18 տոկոս: Իսկ ընդամենը այդ շրջանում ակտիվը հաշվվում է 883 հոգի, որից 183-ը՝ հարվածայիններ:

Բաշկիրիայի տվյալները ցույց են տալիս, թե-ինչպես կոլտնտեսական ակտիվի աճման և նրա դաստիարակման հիման վրա լուծվում է արմատական բնակչությունից կադրեր ստեղծելու

պատմական խնդիրը: Այդ հաստատվում է մյուս մարզերի առանձին ազգային շրջանների տվյալներով: Այսպես, Միջին Վոլգայի չուվաշական Ստալինյան շրջանում, հենց կոլտնտեսությունների տվյալների համաձայն, չուվաշները վարչության անդամների կազմում 82,8 տոկոս են, ճյուղերի վարիչների մեջ՝ 83 տոկոս, բրիգադիրների մեջ՝ 93,7 տոկոս:

Կոլտնտեսական ակտիվի փորձական կադրը լիակատար հնարավորություն է տալիս բոլոր շրջաններում հավաքել արտադրական գործունեության հարուստ փորձ ունեցող նոր, թարմ կադրեր գյուղի, շրջանի վոչ միայն կոլտնտեսական, այլև խորհրդային ու կոոպերատիվ շինարարության համար: Այդ ակտիվի մեջ՝ նրա ճիշտ կազմակերպման և ոգտագործման դեպքում՝ գտնվում են ամենավիթխարի հնարավորություններ գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսականի վերադաստիարակման, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման խնդիրների արագ և հաջող լուծման համար:

Սակայն, պետք է ուղղակի ասել, վոր մի շարք մարզերում և շրջաններում ակտիվի հետ աշխատանք կատարելու ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումները զգալի չափով հետ են մնում կոլտնտեսական մասսաների ակտիվության աճումից:

Այս տեսակետից ապշեցուցիչ որինակ է ներկայացնում Հյուսիսային Կովկասը, վորտեղ հաշվվում է մոտ 80 հազար կոլտնտեսության նախագահներ, վարչության անդամներ, բրիգադիրներ, ֆերմաների վարիչներ և այլն, մոտ 195 հազար հարվածայիններ: Այս վիթխարի, 300 հազար հոգու հասնող ակտիվիստների բանակը ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ճիշտ ղեկավարություն կազմակերպելով, բոլշևիկյան անհաշտություն ցուցաբերելով ամեն տեսակ ոպորտունիստական պրակտիկայի հանդեպ, լիովին ու ժամանակին ապահովելու բոլոր տնտեսական-քաղաքական միջոցառումները:

Սակայն մի շարք վայրերի, մասնավորապես Հյուսիսային Կովկասի փորձն ամբողջ ակներևությամբ վկայում է, վոր շատ կուսկազմակերպություններ անհրաժեշտ գործնական յեզրակացություններ չեն արել կոլտնտեսական ակտիվի հետ կատարելիք աշխատանքի մասին ԿԿ-ի 1932 թ. փետրվարի 4-ին ընդունած վորոշումներից, թերագնահատել են կոլտնտեսական մասսաների վրա ազդելու և նրանց ղեկավարելու այս կարևորագույն լծակի նշանակությունը, չեն կարողացել հենվել նրա վրա՝ կոլտնտեսական ակտիվի ոգնությամբ մասսաներին կոլտնտեսության ներսում յեղած կուլակային տենդենցների և դասակարգային թշնամու վոտնձգությունների դեմ պայքարի հանելու համար:



Իսկ ինչո՞վ է բացատրվում կոլտնտեսական ակտիվի այսպիսի միանգամայն անբավարար ոգտագործումը:

Այդ բացատրվում է ամենից առաջ ակտիվի հետ կատարելիք աշխատանքի ոպորտունիստական թերագնահատումով: Յեթե նախքան համատարած կոլեկտիվացումը շատ կուսբջիջներ, խորհուրդներ, կոոպերատիվներ գյուղում զբաղվում եյին գյուղացիական ակտիվով, դաստիարակում եյին չքավորական խմբերին, ակտիվին հավաքում եյին գյուղխորհրդի, կոոպերացիայի, հողամասի շուրջը,—ապա այդ, դժբախտաբար, չի կարելի ասել կոլտնտեսական ակտիվի վերաբերմամբ:

«Առաջքաշեցինք, և պրծավ»,—այդպիսին է այն դատողությունների իմաստը, վոր անում են մի քանի կուսկազմակերպություններ կոլտնտեսական ակտիվի վերաբերմամբ: Ցավ իրոք, յեթե հետևելու լինենք, թե ինչ դրության մեջ է գտնվում ակտիվը կոլտնտեսությունում, ապա հարկավոր կլինի խոստովանել, վոր, յեթե բրիգադիրներին մերթ-մերթ հավաքում են կոլտնտեսության վարչությունում, ապա հարվածայինները, մրցողները, բացի տոնական դեպքերից, չեն հավաքվում:

Անհրաժեշտ է նաև մատնանշել այն միանգամայն անթույլատրելի յերևույթը, վորը գոյություն ունի մի շարք տեղերում: Հաճախ կարծում են, վոր ակտիվիստ է հանդիսանում միմիայն կոլտնտեսության վարչության անդամը կամ բրիգադիրը: Այդ կոպիտ սխալը հանգում է նրան, վոր կոլտնտեսական արտադրության հաջողությունը վճռող ակտիվիստ կոլտնտեսականների խումբը, հարվածայինը, մրցողը ծածկվում են բրիգադիրի կողմից: Չի կարելի բրիգադիրին հակադրել արտադրական ակտիվիստին, բայց միևնույն ժամանակ պետք է վճռականորեն պայքարել ակտիվիստի ձևական բնորոշման դեմ:

ԿԿ-ը բավական կատեգորիկ կերպով 1932 թ. փետրվարի 4-ի իր վորոշման մեջ մատնանշեց, վոր կոլտնտեսական ակտիվը բաղկացած է «հարվածային կոլտնտեսականներից, մրցման մասնակիցներից, բրիգադիրներից և այլն»: Կոլտնտեսական ակտիվին աշխատանքի ներգրավելիս չպետք է մոռանալ ընկ. Ստալինի հետևյալ ցուցումը.

«Միթե՞ կլիներ կարծել, որ, յեթե կան կոլտնտեսություններ, ուրեմն կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է սոցիալիզմի կառուցման համար: Առավել ևս սխալ կլիներ կարծել, թե կոլտնտեսության անդամներն արդեն իսկ սոցիալիստներ են դարձել: Ո՛չ, հարկավոր է դեռ յերկար աշխատել՝ գյուղացի կոլտնտեսականին վերամշակելու, նրա ինդիվիդուալիստական հոգեբանությունն ուղղելու և նրանից սոցիալիստական հասարակության իսկական աշխատող կերտելու համար»:

Հենց այն պատճառով, որ բավարար չափով չեն հաշվել և թերագնահատել են դասակարգային պայքարի տարրերը կոլտնտեսություններում, մի շարք կուսկազմակերպություններ անբավարար չափով են կոլտնտեսական ակտիվի աչալրջությունը մոբիլիզացիայի յենթարկում ընդդեմ կուլակային յելույթների: Այդ կույր մոտեցումը առաջքաշման հարցերի նկատմամբ հաճախ դասակարգային թշնամուն հնարավորություն է տալիս խցկվել կոլտնտեսական ակտիվի շարքերը, առաջ գնալ և հասնել բրիգադիրների շարքերը, այնտեղից էլ՝ կոլտնտեսության վարչությունը և այլն:

Այս դրությունն առանձնապես ցայտուն կերպով դրսևորվեց Հյուսիսային Կովկասում, որտեղ Կուբանում տարբեր կուսկազմակերպությունների դասակարգային զգոնության բթացման և օպորտունիստական անզգուշության հետևանքով դասակարգային թշնամին կարողացավ մի շարք շրջաններում ներս խցկվել կոլտնտեսության մեջ և կոլտնտեսականների ու մենատնտեսների հետամնաց մասսային իր հետևից տանել հացամթերումներն ու ցանքացանը վիժեցնելու համար:

Բայց յեթե Հյուսիսային Կովկասի փորձը ցույց է տալիս, թե ինչպես առանձին «կոմունիստներ» աջ օպորտունիզմի դիրքերից գլորվում էին ուղղակի հակահեղափոխության ուղին, ապա, ընդհակառակը, մյուս մարզերի և շրջանների պրակտիկայի մի շարք փաստեր վկայում են այն մասին, որ բրիգադում ակտիվ աշխատանք կատարելով և անձնական օրինակով կարելի յե դրական արդյունքներ ձեռք բերել: Իբրև օրինակ վերցնենք Մորդովյան մարզի Տորբեյեվյան շրջանի Սուրյուլ գյուղի կուսբջիջը:

Փորձնական դաշտ դուրս գալու ժամանակ կոլտնտեսության յերկրորդ բրիգադին թույլ չտվին շարք անցնել «տուգվելու» քաշող ուժի վատ նախապատրաստման համար: Բրիգադիր Բայբուլատովը դիմեց բջիջի օգնության: Բջիջն ուշադրությամբ վերաբերվեց բրիգադիրի պահանջին և իբրև կուսկազմակերպիչ օգնության դրկեց կուսթեկնածու Մեֆոդյաև Տանաշևին:



Ընկ. Մեֆոդյաևն անձնական օրինակով մեծ ագիտացիա ծավալեց. վերցրեց յերկու ամենաթույլ ձիերը և նորմայի գերակատարման համար մրցման հրավիրեց մյուս կոլտնտեսականներին. օգնեց ուժերի դասավորում կատարելու և համբերատար կերպով ապացուցեց պլանի գերակատարման հնարավորությունը, ուշ գիշերին դեմ գնաց ձիապանների հետ զրուցելու, բացատրելով նրանց պարտականություններն ու խնդիրները:

Արդյունքը յեղավ այն, որ բրիգադի ձիու պարկը լավագույնների շարքն անցավ: Յերկրորդ բրիգադն իր հետևից քաշեց չորրորդ բրիգադին էլ առաջնության համար պայքարելու, և կոլտնտեսությունը ցանքն ավարտեց ժամանակին:

Այս նմուշը լավագույն օրինակն է ծառայում այն բանի, թե ինչ կարելի յե ձեռք բերել բրիգադում ուժերի ճիշտ դասավորում կատարելու և կոլտնտեսական ակտիվին կոնկրետ խնդիրների շուրջը կազմակերպելու դեպքում: Ընդհակառակը, անուշադիր վերաբերմունքը կոլտնտեսական ղեկավար կադրեր ստեղծելու խնդրին զգալի չափով արգելակում է բանվորական ուժի ճիշտ օգտագործումը կոլտնտեսությունում, ամուր արտադրական կարգապահության հաստատումը, իջեցնում է մասսաների ղեկավարման որակը:

Դեռ այժմ էլ, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի որոշումից հետո, քիչ չեն դեպքերը, յերբ բրիգադիրին ձիգ են տալիս, զցում են նրա տնտեսական հեղինակությունը: Դրա հետ միասին դեռ շատ կան փաստեր, յերբ կոլտնտեսության վարչության կարգադրությունները բրիգադիրի կողքով են անցկենում, յերբ փոփոխություններ են մտցվում բրիգադի ներքին կարգ ու կանոնի մեջ, կոլտնտեսականների, արտադրության գործիքների, քաշող ուժի և այլ տեղափոխումներ են կատարվում առանց բրիգադիրների գիտության:

Այսքանից հետո պարզ չի՞ արդյոք, որ այդպիսի վերաբերմունքը բրիգադիրների հանդեպ նվազեցնում է նրանց աշխատունակությունը, տնտեսական նախաձեռնությունը:

Վերջապես, մի բան, որ միանգամայն անթույլատրելի յե մշտական կազմով արտադրական բրիգադ ստեղծելու պայմաններում, դա բրիգադիրներին հաճախակի փոփոխելն է: Հազվագյուտ բացառություն են կազմում աշխատանքի յերեք-յերկու տարվա ստաժ ունեցող բրիգադիրները, իսկ միևնույն բրիգադին ղեկավարելու մասին իսկի խոսել էլ չենք կարող: Մենք ամենուրեք ունենք այնպիսի փաստեր, յերբ՝

«Կոլտնտեսական գյուղացին այսօր բրիգադիր է նշանակված, վաղը բջիջը նրան հանում է, այսօր բջիջը նրան առաջ է քաշում դաշտի վարիչի պաշտոնով, վաղը բջիջը նրան այլ տեղ է փոխադրում։ Այդպիսի ղեկավարությունը մի ղեկավարություն է, յերբ ուշադրություն չեն դարձնում կոլտնտեսականին՝ իբրև կենդանի մարդու» (Պոստիշև)։

Կենդանի մարդու, կոլտնտեսական շինարարության ակտիվ մասնակցի մասին հոգալը պետք է կարևորագույն խնդիր հանդիսանա կոլտնտեսական կադրերի պատրաստման և դաստիարակման գործում։ Հարկավոր է, վերջապես, լրջորեն դնել կոլտնտեսական ակտիվի արտադրական-տեխնիկական մակարդակի բարձրացման հարցը՝ այն դիֆերենցիալացիայի յենթարկելով կոլտնտեսականների յուրաքանչյուր խմբի մասնագիտացման և տնտեսական թեքման համապատասխան։

Կոլտնտեսական ակտիվի աճման և դաստիարակման վճռական պայմաններից մեկն է հանդիսանում ճիշտ կազմակերպված ու ծավալված կուսմասսայական աշխատանքը, կուսակցական և կոմյերիտական ուժերի հստակ դասավորումը բրիգադում, կոմունիստների և կոմյերիտականների ավանգարդային դերի ուժեղացումը բրիգադի արտադրական գործունեության մեջ, կոլտնտեսության շարժաբեր փոկերի ճիշտ օգտագործումը։

Կոլտնտեսական կուսբջիջներին ղեկավարելու հարցերն այժմ դրվում են առանձին սրությամբ։ Հյուսիսային Կովկասի դասերն ամբողջ լրջությամբ նախազգուշացնում են նաև մյուս յերկրներին այն մասին, վոր անհրաժեշտ է զգալիորեն ուժեղացնել բոլշևիկյան զգոնությունը և դասակարգային հստակությունը կոլտնտեսական բջիջների աշխատանքում։ Հիմնական խնդիրը, վոր այժմ դրված է գյուղական կուսկազմակերպությունների առաջ, այն է, վոր պետք է՝

«Կարողանալ մեր և առաջին հերթին բջիջների աշխատանքն այնպես վերակառուցել, վոր կանգնենք մեր առաջ դրված խնդիրների, այն է՝ մասսաներին ղեկավարելու և կուսակցության լոզունգների շուրջն ու նրանց կատարման համար մղվող պայքարում նրանց կազմակերպելու խնդիրների բարձրության վրա» (Կագանովիչ)։

Այստեղից է բխում կոլտնտեսական ակտիվին յերևան հանելու, կազմակերպելու և համախմբելու, նրան դաստիարակելու, նրա քաղաքական և արտադրական մակարդակը բարձրացնելու աշխատանքի ամբողջ լրջությունը։ Դրան կարելի չէ հասնել բրիգադում՝ իբրև վողջ մասսայական աշխատանքի կենտրոնում՝ կուսմասսայական աշխատանք ծավալելով, լայնորեն տարածելով այն



բոլոր ձևերը, վորոնք նպաստում են բարձրացնելու կոլտնտեսականների ակտիվությունը, նրանցից լավագույններին առաջ քաշելու կոլտնտեսական ակտիվի շարքերը։

«Սովորել գյուղացիներին համբերատար կերպով բացատրել նրանց համար անհասկանալի հարցերը, սովորել գյուղացիներին համոզել, առանց դրա համար ժամանակ ու ջանք խնայելու» (Ստալին)—այս խնդիրը պահանջում է գործնական միջոցառումներ գործադրել աշխատանքի ճաշի ու յերեկոյա դադարները նպատակահարմար ձևով օգտագործելու՝ կոլտնտեսականների հետ զրույցներ ունենալու, նրանց թերթեր կարդալու, վորոշումները բացատրելու, կոլտնտեսականներին հետաքրքրող հարցերին պատասխանելու համար։

Այստեղ անհրաժեշտ է առանձնապես հանձնարարել քաղօրեր անցկացնելը, վորոնք կնպաստեն կոլտնտեսական մասսաների ակտիվության բարձրացմանը և քննադատության ու ինքնաքննադատության լայն ծավալմանը։

Կոլտնտեսականի արտադրական-քաղաքական դաստիարակությունը բրիգադում պետք է կատարվի արտադրական գործունեության կոնկրետ փաստերի հիման վրա։ Ուստի առանձին լրջությամբ պետք է մոտենալ բրիգադային արտադրական խորհրդակցությունը սիստեմատիկ կերպով ղեկավարելու և նրա աշխատանքին օգնելու խնդրին, ապահովելով նրա կանոնավոր գումարումը և ընդունած վորոշումների կատարումը։

Հարկավոր է ամենից ավելի կայուն, դասակարգային պայքարում ստուգված հարվածային կոլտնտեսականներին ավելի վճռականությամբ առաջքաշել ղեկավար աշխատանքի։ Բրիգադիրի հետ պետք է սիստեմատիկաբար աշխատանք կատարել, այնպես վոր նրա գիտելիքների մակարդակն ավելի բարձր լինի, քան շարքային կոլտնտեսականինը, վոր նա կոլտնտեսականին հանի ավելի բարձր աստիճանի վրա և վոչ թե դնա նրա պոչից։

Չափազանց արժեքավոր է այն փորձը, յերբ բրիգադիրների գյուղական ու շրջանային հավաքներ են կազմակերպում ըստ տնտեսության ճյուղերի՝ դնելով գործնական արտադրական հարցեր—դաշտավարների, անասնապահների, բրիգադիրների հատուկ խմբակների կազմակերպումը մասնագետների ղեկավարությամբ, հեռակա ուսուցման կազմակերպում ռադիոյի միջոցով, հատուկ կոնսուլտացիա խրճիթ-ընթերցարաններին, ագրոկուլտուրայի անկյուններին կից և այլն։

Միաժամանակ անհրաժեշտ է համառ ուշադրություն դարձնել կոլտնտեսական ակտիվի քաղաքական դաստիարակությանը՝ քաղաքական գրույցներ անցկացնելով, ակտիվիստներին քաղդըպրոցները ներգրավելով, այնպիսի հաշվով, վոր ակտիվը քաղաքական լավ կոփում ստանա կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման համար մղվող պայքարում, գռփողականության, ծուլության, կուլակային իդեոլոգիայի և մանրբուրժուական տարերքի ամեն տեսակ արտահայտությունների դեմ մղվող պայքարում։

Կուսբջիջները և կուսկազմակերպիչները պետք է ճանաչեն կոլտնտեսական ակտիվին, գիտենան յուրաքանչյուր ակտիվիստի անհատական վորակը, գիտենան նրա «անձնական գործը», ինչո՞վ է ինչպես է նա ցուցաբերել իրեն, ինչ կերպ և ինչպիսի կոնկրետ բնագավառում նա կարող է օգտագործվել։ Յուրաքանչյուր ակտիվիստի համար անհրաժեշտ է ստեղծել ընկերական վերաբերմունք և նրա աշխատանքին օգնելու պայմաններ։

Այստեղից յեզրակացություն՝ շաբլոն չդարձնել աշխատանքը, չսեղմել ձևերի և սահմանների «պրոկրուստյան մահճում», վորոնել այնպիսի ձևեր, վորոնք բխեն կենդանի մարդու հետ կենդանի աշխատանքը լրջորեն կազմակերպելու անհրաժեշտությունից։

Միայն այս կերպ կարելի յե կոփել իրոք ամուր կոլտնտեսական ակտիվ, նրա միջից առանձնացնել լավագույն ուժեր նոր կադրեր ստեղծելու համար և գործնական աշխատանքում սիստեմատիկ կերպով դաստիարակելու միջոցով ստեղծել բոլոր պայմանները ակտիվիստների ամուր միջուկ կազմակերպելու համար, միջուկ, վորի վրա կոլտնտեսությունների կուսբջիջները կկարողանան հենվել իրենց քաղաքական-մասսայական աշխատանքում։



7

## ԱՄՈՒՐ ԿԱԴՐԵՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻՆ*)

Կոլտնտեսությունների ներսում վերջին տարիներս ներքևից բարձրացան միլիոնավոր մարդիկ, վորոնք դարձան կոլտնտեսական գործի կազմակերպիչներ և ղեկավարներ. 200 հազարից ավելի կոլտնտեսության նախագահներ, մեկ և կես—յերկու միլիոն վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, մեկ միլիոնից վոչ պակաս բրիգադիրներ, հարյուր հազարավոր դաշտավարներ, յերկու հարյուր հազար տրակտորիստներ, հաշվետարների, ագրոտեխնիկների և զոոտեխնիկների ահագին բանակ և այլն և այլն։

Իսկ միլիոնավոր շարքային արտադրական կոլտնտեսականների մեջ ինչքան կան աշխատանքի հարվածայիններ, վորոնք համաձայն են կոլտնտեսական կարգերի հետ, առաջավոր մարդիկ, կոլտնտեսական գյուղացիության աչքի ընկնող կազմակերպիչներ։

Դա կոլտնտեսական կարգերի աճման ամենաուշագրավ ցուցանիշներից մեկն է և միաժամանակ՝ բանվոր դասակարգի և բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ այդ կարգերի հետագա ամրացման հզոր աղբյուրներից մեկը։

Այս փաստն անվիճելի յե։ Բայց անվիճելի յե նաև այն, վոր մենք դեռ բավարար չափով չենք տիրապետել գյուղի այդ նոր կադրերին։ Անվիճելի յե նաև այն, վոր կոլտնտեսական գործի կազմակերպիչների և տեխնիկների այդ բանակի կուլտուրական մակարդակը դեռ բավարար չի, համենայն դեպս շատ ցածր է այն պահանջների մակարդակից, վորն առաջադրում է կուսակցությունը կոլտնտեսություններին բերքատվության բարձրացման, հաշվառ. ու պարզորոշ աշխատանքի ասպարեզում, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացման ասպարեզում։

Եվ ԳԼԽԱՎՈՐԸ, վորը պետք է ընդգծել առանձին ուժգնու-

*) «Соц.-Земледелие» թերթի 1933 թ. հունվարի 6-ի առաջնորդողը

թյամբ, այն է, որ կոլտնտեսության գլուխ կանգնած, նրա աշխատանքի առանձին բնագավառների գլուխ կանգնած մարդկանցից վոչ բոլորն են քաղաքականապես բավարար չափով ստուգված: Հացամթերումների կուլակային սաբոտաժի դեմ կուսակցության մղած պայքարն առանձին ուժգնությամբ ցույց տվեց, վոր կոլտնտեսությունների կադրերը մի շարք շրջաններում չափազանց խցկված են անկայուն, յերբեմն էլ թշնամական, վնասարարական տարրերով, վորոնք կոլտնտեսություն են խցկվել նրա հզորությունը թուլացնելու, նրա շարքերը քայքայելու համար: Կուբանում, Ուկրայինայում և Ստորին Վոլգայում կոլտնտեսությունների վարչատնտեսական ապարատի սկսված զտումը մեզ ցույց է տալիս կուլակային հակակոլտնտեսական աշխատանքի նոր մեթոդները: Այդ ամբողջ կուլակային սպիտակ-գվարդիական փոհմակը, այդ ամբողջ թշնամի վիժվածքը, ոգտվելով կուսակցական կազմակերպությունների քաղաքական կարճատեսությունից, իսկ մի շարք տեղերում կուսատոմս ունեցող թշնամիների բացահայտ թուլյատրվությունից, խցկվել են կոլտնտեսությունները և ղեկավար պոստերը: Ոգտագործելով իրենց դիրքը և հսկողության բացակայությունը, նրանք ամեն կերպ փորձում են հենվել մանր-սեփականատիրական վատթարագույն բնազդների վրա՝ հափշտակումներ կազմակերպելու, սեփականությունը և կոլտնտեսականներին խաբելու, վնասարարությամբ զբաղվելու համար:

Կոլտնտեսական կադրերն ամրացնել նշանակում է առաջին հերթին մաքրել կոլտնտեսությունները կեղտոտած կուլակային և սպիտակ-գվարդիական աղբից: Դրա համար անհրաժեշտ է սրել քաղաքական աչալրջությունը յուրաքանչյուր կոնկրետ յերևույթի նկատմամբ կոնկրետ կոլտնտեսությունում, կոլտնտեսությունում այս կամ այն պոստը գրավող յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ: Կուսակցական կազմակերպությունների, ՄՏԿ-ների և հողօրգանների պարտականությունն է՝ դադարել կոլտնտեսության մասին դատել նրա տնտեսական կողմից, վորովհետև կուլակային գործակալը կոլտնտեսությունում միաժամանակ առաջնակարգ աշխատող է: Նա պատրաստ է ամենագեղեցիկ ռապորտներ շարադրել: Նա պատրաստ է «իշխանավորների» համար դրել ամենաուրախալի հաղորդագրություններ: Իսկ վորևէ «վերադաս ինստանցիայի» ականջկալս չինովնիկը փոխանակ կոլտնտեսությունից ներս նայելու, այնտեղ խորապես թափանցելու, մարդկանց ճանաչելու և ստուգելու, մարդիկ, վորոնք վճռում են ամեն ինչ, —բարեհոգությամբ



թաղնվում է խորհրդային իշխանության թշնամու գրած ստահոդ ռապորտի և կեղծ հաղորդագրության հետև և ինքն է խաբում կուսակցությունն ու պետությունը: Պետք է ամեն կերպ զարգացնել կոլտնտեսական տնտեսությունը կազմակերպող և ղեկավարող մարդկանց նախաձեռնությունը: Բայց այդ նշանակում է, վոր հարկավոր է դրա հետ միասին ոքն ոքին հսկել մարդկանց վրա թե՛ անմիջապես և թե՛ կոլտնտեսականների մասսաների միջոցով, ան- [illegible] առաջին հերթին կոլտնտեսության լավագույն մարդկանց, նրա ակտիվ կորիզի նախաձեռնությանն ու կարծիքին:

Միմիայն այդ ճանապարհով հնարավոր կլինի յերևան հանել կոլտնտեսություններում նստած վնասարարներին: Կոլտնտեսական կադրերի անխնա զտումը կուլակներից, կոլտնտեսական կարգերի բոլոր և ամեն տեսակ թշնամիներից, անխնա պատժել նրանց՝ պրոլետարական դիկտատուրայի տնօրինության տակ յեղած բոլոր միջոցներով—այդպիսին է կոլտնտեսական կադրերի ամրացման առաջին ուղին:

Բայց միայն այդ քիչ է: Հենց թշնամի տարրերից կոլտնտեսությունները զտելը ամբողջ սրությամբ առաջադրում է՝ նրանց տեղը ներքևից նոր մարդկանց առաջքաշելու, այդ նոր մարդկանց, կոլտնտեսական ակտիվի ամբողջ մասսային քաղաքական և տեխնիկական պատրաստություն տալու խնդիրը: Կոլտնտեսության կադրերի կողմից կոլտնտեսական տնտեսության տեխնիկային տիրապետելը (ագրոմինիմումներ, բարդ մեքենաներ, հաշվային գործ և այլն), նրանց զինումը քաղաքական պայքարի փորձով, —դա դասակարգային թշնամիներին ճնշելու ամենաուժեղ զենքերից մեկն է: Չե՞ վոր հայտնի յե, վոր հաշվետարի, հաշվապահի, պահեստապետի, ագրոտեխնիկի պոստում գտնվող այս կամ այն գրագետ սպիտակ-գվարդիականին հաջողվում է իր հետևից տանել կոլտնտեսության հետամնաց տարրերին, վորովհետև նա «ավելի կուլտուրական» է մնացած մասսայից, վորովհետև նա ասես թե իր ձեռքումն է պահում այն բոլոր պաշտոնների մոնոպոլիան, վորոնք վորոշ գրագիտություն են պահանջում: Նշանակում է, պետք է լրջորեն ձեռնարկել սովորեցնելու և քաղաքականապես դաստիարակելու մեզ ամենից ավելի մոտիկ կանգնած մարդկանց:

Ահա թե ինչու կադրերի պատրաստությունը, վորը կատարվում է սովորաբար ձմեռը և այժմ ծավալվում է տեղերում, հատուկ նշանակություն է ստանում: Այդ բնագավառում յեղած նախկին պրակտիկայի դժբախտությունն այն եր, վոր շատ շրջաններ—

ցում չափազանց գործամոլական մոտեցում էին ունեցել այս գործին: Վերցնում էին հասած մարդկանց: Դրա համար էլ ամեն տնտեսի գաղթօջախներում ընկնում էին զանազան խորթ մարդիկ: Ընկնում էին ցուցադրական կողմի հետևից, պլանի ձևական կատարման հետևից: Միքանի հարյուր մարդ շրջաններն էին կանչում 2—3 օրով, բոլորին հրամցնում էին դասախոսությունների միևնույն ցիկլը, իսկ դրանից հետո հաղորդագրություններ էին տպագրում առաջադրության «կատարման և գերակատարման» մասին:

Ինքնին հասկանալի յե, վոր այդ յեղանակով վոչ մի կադր ստեղծել, պատրաստել չի կարելի: Առանձնապես վնասակար եր տրակտորիստների պատրաստման պրակտիկան: «Թվով ավելի, վորակով վատթար» կանոնը հանգում եր նրան, վոր քիչ թվով խորք մարդիկ չեյին պատրաստում, իսկ ուսուցումը կատարում եյին հանցագործության աստիճանի վրա: Այդ մենք հատուցում ենք ներկայումս տրակտորների ահագին պարապուրդներով, ագրոտեխնիկայի կոպիտ խախտումներով և շարքից դուրս ընկած մեծ քանակությամբ տրակտորներով:

Կուլակային սաբոտաժի դասերը Հյուսիսային Կովկասի կազմակերպություններին սովորեցին այժմ ավելի լրջորեն մոտենալ կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացման այս կարևորագույն բնագավառին: Հյուսիսային Կովկասի կազմակերպությունների արժանիքը—առնվազն առաջին, կազմակերպչական ետապում—այն է, վոր նրանք այս հարցը դրում են բավարար սկզբունքային–քաղաքական բարձրության վրա, այն խնդիրը դնում են կոլտնտեսական սարքին կադրերը մեզ նվիրված մարդկանցով նորացնելու և ամրացնելու տեսակետից:

Այնուհետև պլանը նախատեսում է գյուղական կուսակցական, կոմյերիտական, խորհրդային և կոլտնտեսական աշխատողների տարբեր կատեգորիաների շերտավորված մոտեցում: Սրան համապատասխան, սահմանվում է դասընթացների հաստատուն ցանց, հատուկ ծրագրերով, հատուկ գիրքավորումներով: Այսպես կոչված «կուրս-կոնֆերանսների» փոխարեն, վորոնք սովորաբար վերածվում են յերկօրյա զեկուցումների,— դասընթացների ժամկետները վորոշվում են 1—2 ամիս: Շրջաններն են ուղարկվում տացանկներով հատուկ մարդիկ դասընթացներ կազմակերպելու համար և հարյուրավոր մարդիկ՝ պարապմունքները ղեկավարելու համար: Այս միջոցառման մասշտաբների մասին վկայում է թեկուզ



այն, վոր ընդամենը յենթադրվում է կոլտնտեսական սիստեմի, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների գծով պատրաստման ցանցում ընդգրկել մոտ 1/2 միլիոն մարդ:

Բայց այս մեծ աշխատանքի ծավալման առաջին ետապում արդեն իսկ յերևում է, վոր վոչ-բոլոր յերկրային կազմակերպություններն են հասկացել այս գործի ամբողջ կարևորությունը: «Զերնոտրեստը» հանգիստ նստած ցուցումներ է սպասում Մոսկվայից, յերկրային լուսբաժինը վոչինչ չի արել ուսանողության մոբիլիզացիայի յենթարկելու ուղղությամբ, մասը մասին չեն խփել դասընթացների գործնական կազմակերպման համար: Դեռ քիչ չէ հնամոլությունն ու լճացածությունը շրջանային կազմակերպություններում, վորոնցից շատերը վոչինչ չեն սովորել՝ դեռևս ամենևին չջախջախված կուլակային սաբոտաժի դեմ մղված պայքարի փորձից:

Նոր տնտեսական տարվա նախապատրաստման սիստեմում կադրերի պատրաստումը պետք է դրվի կարևորագույն, կենտրոնական տեղերից մեկը: Հյուսիսային Կովկասի միջոցառումների տիպի լայն միջոցառումներ ծավալելը յուրաքանչյուր յերկրի, յուրաքանչյուր շրջանի պարտականությունն է:

Բայց լոկ վորոշումներով այս գործը վոտքի վրա կանգնեցնել չի կարելի: Հաջողությունը վճռում են՝ իսկական ոպերատիվ ղեկավարությունը, սիստեմատիկ ստուգումը, այդ գործին պատասխանատու մարդիկ նշանակելը, մարդկանց ընտրության և պատրաստման վորակի քաղաքական վերահսկողությունը, դասընթացները ստուգված դասատուական կադրերով կոմպլեկտավորելը, դասական պիտույքների մատակարարումը և այլն:

Այս գործի կազմակերպչական-մեթոդական կողմը վիթխարի նշանակություն ունի: Տարակույս չկա, վոր դասընթացներն ուշադրության կենտրոնական պետք է դարձնեն մարդկանց քաղաքական պատրաստությունը: Յուրաքանչյուր գյուղական աշխատող, կազմակերպիչ, կոլտնտեսության ղեկավար, տրակտորիստ, այս կամ այն գործի տեխնիկ, ակտիվիստ, պետք է յուրացնեն կուսակցության քաղաքականության հիմունքները: Պետք է նրանց օգնել ըմբռնելու և ջոկելու այն նոր պայմանները, վորոնք ստեղծված են գյուղում շնորհիվ մեր յերկրում սոցիալիզմի տարած հաղթանակի, կոլտնտեսական գործի հաղթանակի, գլուխ հանելու կոլտնտեսության շուրջը և կոլտնտեսության ներսում մղվող քաղաքական պայքարի նոր պայմաններից: Բայց դրա հետ միա-

ժամանակ հարկավոր է, որ յուրաքանչյուրը ձեռք բերի և յուրացնի այն հատուկ գիտելիքները, վորոնք նրան անհրաժեշտ են տնտեսության այս կամ այն ճյուղը, աշխատանքի այս կամ այն բնագավառը ղեկավարելու համար: Բրիգադիրը, անասնապահը, դաշտավարը, հաշվետարը և այլն,—յուրաքանչյուրը պետք է ձեռք բերի անհրաժեշտ գիտելիքներ հենց տվյալ բնագավառում, վորովհետև դրանից է կախված տեխնիկայի իրական տիրապետումը, առանց վորի անկարելի յե ղեկավարել և աշխատել խոշոր, սոցիալիստական տնտեսության մեջ:

Պետք է հարկ յեղածին պես ձեռնարկել այս դժվարին, բայց պատվավոր գործին:

Այն ժամանակ հաջող պայքարը կուլակային վնասարարության դեմ, պայքարը կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական-տնտեսական ամրացման համար անչափ ավելի արագ առաջ կընթանա:

Մարդիկն են վճռում: Այդ մարդկանց կոլտնտեսությունները պետք է ստանան ինչ գնով ուզում է լինի:



## 8

# ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԴՐԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

### ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ-Ի 1932 Թ. ՄԱՅԻՍԻ 10-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Արգելել ամեն տեսակ շրջանային օրգաններին կոլտնտեսությունների վարչությունների անդամներին հանել առանց վոր յուրաքանչյուր առանձին դեպքում այդ հաստատեն Յերկրային հողվարչությունը և Յերկրային կոլտնտմիությունը:

2. Հաստատել ԽՍՀՄ Հողժողկոմատի և ԽՍՀՄ Կոլտնտկենտրոնի վորոշումը՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը հետևյալ կետերով լրացնելու մասին.

«1) Կոլտնտեսությունների վարչություններն ընտրվում են մեկ տարի ժամանակով:

2) Կոլտնտեսությունների վարչությունների նախագահների վերընտրություններ չեն թույլատրվում, բացառիկ դեպքերում թույլատրվում են լոկ յուրաքանչյուր առանձին դեպքում Յերկրային կոլտնտմիության կողմից հաստատվելուց հետո:

3) Բրիգադիրներին նշանակում է կոլտնտեսության վարչությունը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

4) Բրիգադիրներին ժամկետից առաջ հանելը թույլատրվում է միայն այն ժամանակ, յերբ յուրաքանչյուր առանձին դեպքում այդ հաստատում են շրջանային կոլտնտմիությունը և շրջանային հողբաժինը»:

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ

ՀՀ Ազգային գրադարան
NL0946089

—50—
1933 թ. — 186
ԱԳՀ 3409

9

# ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ-Ի 1932 Թ. ՄԱՅԻՍԻ 15-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ*

1. ԿԿ-ն արձանագրում է, վոր մի շարք կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում, չնայած արտադրության մեջ կուսակցական և կոմյերիտական միջնախավի անբավարար լինելուն, գոյություն ունի արտադրական կոմունիստներին և կոմյերիտականներին վոչ-արտադրական աշխատանքների սխալ առաջքաշելու պրակտիկա (պահապաններ, կուրիերներ, սպասարկու անձնակազմ և այլն)։

2. ԿԿ-ն առաջարկում է յերկրկոմներին, մարզկոմներին, շրջկոմներին, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների բջիջներին՝ թույլ չտալ արտադրական կուսակցականներին, կոմյերիտականներին և անկուսակցականներին աննպատակահարմար ձևով վոչ-արտադրական աշխատանքների տեղափոխել, ձգտելով, ընդհակառակը, ամեն կերպ նրանց պահել արտադրության մեջ և ճիշտ դասավորել կարևորագույն արտադրական բնագավառներում։

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ